

ՊԵՏՐԱՏԻ
ԵԳԱՆԳԻՆ
ՐԱԴԱՐԱՆ

№ 31 - 32

№ 31 - 32

ՇԻՐԿԱՆՑԱՐԵ

ԱՐՏՈՎՏԸ

891.99
Հ - 66

ԱԿԱԴ. ՀՐԱՄԱՆԱԳՈՐԾՈՒՅՆ
ԵՐԵՎԱՆ

1934

-6 NOV 2001

ՊԵՏԱՐԱՔԻ ԵՎԱՆԱԳԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 31-32

№ 31-32

891.99


7-66

ԿՎ

1006
ՀՅԴՀ

3084

Ա. Ռ Ս Ի Ս Լ



1994

Պատ. խմբ. Ս. Հարությունյան, տեխ. խմբ. Տ. Խոչվանքյան,
սըբագրիչ՝ Հ. Ստոկյան Գետհրատի տպարան, պատվեր՝ 128
դրամլառ 8370 (թ), հրատ. 2795, Տիրաժ 5000:

Հաճախած եւ արտադրության 10|XII-133 թ.
Ստարագրած եւ տպագրության 10|II-1934 թ.

Հինգ ամիս եր ընդամենը Ողեսայուամն եյի, չոր-
տրող անդամ փոխեցի սենյակս։ Փոքր ի շատե մեծ
քաղաքում բնակվող մենակեցի համար մի առանձին
հաճույք և ստեղ-ստեղ կացարան փոխելը։ Անցնելով
մի թաղից մյուաը, կարծում ես մի յերկրից մյուսն
անցար։ Նոր հարեվանություն, նոր միջավայր, յեր-
բեմն այլ կենցաղով ու վոգով։

Այս անդամ պիտի բնակվեյի քաղաքի աղմկալի
փողոցներից մինում, հինգհարկանի մի տան յերրորդ
հարկում։ Տանտերուհիս իտալուհի յեր, դեր, առողջ,
ամրակազմ մի այրի՝ մոտ հիսուն տարեկան։ Նրա ա-
մուսինը յեղել եր խտալական ոպերայի հուշարար, ✓
շատ վաղուց հայրենիքից տեղափոխված Ռուսաստան։
Մեռնելով, կնոջ ու միակ դստեր համար թողել եր
երրու ժառանգություն հին նոտաների մի մեծ կապոց
և իտալացի արտիստների ծանոթությունը։ Այրին,
ապլելու ուրիշ միջոց չունենալով, պարագում եր
սենյակներ վարձու տալով։

Հենց առաջին որը յես ծանոթացա հարեվաննե-
րիս հետ։ Այդ ինձ համար նոր և բավական հետա-
քրքրական շրջան եր։ Նա բաղկացած եր մեծ մասամբ
իտալացիներից։ Կար և մի ոռւս ուսանող և մի հրե-
ռւհի առամնաբուժ՝ բավական գեղեցիկ, թեև վոչ
այնքան ել թարմ։

Կենարոնը կազմում եր տանտիրուհու դուստրը՝

շիկացեր, փղոսկրի պես փայլում, մաքուր առամբներով և գեղեցիկ աչքերով քսան տարեկան Լուիզան։ Նա յերգում եր, ուներ զորեղ ու անուշ ձայն, պատրաստվում եր բեմին նվիրվելու։ Գիտեր նվադել դաշնամուր, յերաժշտության դասեր եր տալիս, փող ժողովում, վոր գնա Իտալիա՝ ձայնը մշակելու։

Առաջին որն անծանոթ շրջանում դղացի սովորական անհարմարություն, յերկրորդ որն ընտելացա, իսկ մի շարաթ անցած՝ բարխական բարեկամացարուրի հետ։ Մենք ճաշում եյինք միենույն սենյակամ, միաժամանակ միենույն սեղանի քով։ Յերկու ժամից սկսած մինչև յերեկոյան չորս-հինգ ժամը ծիծաղ, յերգ, նվագում, պար ու սրախոսություններ խառնվում եյին միմյանց և ջերմացնում տարբեր աղդերի ու դաշնանությունների պատկանող մարդկանց բարեկամական մթնոլորտը։

Մի որ ճաշեց հետո Լուիզան նստեց դաշնամուրի քով և սկսեց նվադել ինչ-վոր վայլ։ Բասո-կոնտատո Զելլինին զրկեց կոնտրայլոտ Լուկրեցիա Կաֆարելինին ու սկսեց պարել։ Բարձրացավ ընդհանուր ծիծաղ, վորովհետեւ իրավ վոր այդ մի դվարճալի դույգ եր. Զելլինին խիստ նիհար եր և շատ բարձրահասակ, Լուկրեցիա Կաֆարելին, ընդհակառակը, խիստ դեր և կարճահասակ։ Լուիզան նվադելով հանդերձ գեղեցիկ դլուխը ձգել եր յետ և անզուսպ քըլքում եր, լեցնելով սենյակը յուր անուշ ձայնի հյութալի հնչյուններով։

Զվարճության տաք միջոցին դռների մեջ նկարվեց ինձ համար մի անծանոթ կերպարանք։ Վոչ վոք

առաջին պահ չնկատեց նրան, բայցի ինձանից, վոր նստած մյի դռների մոտ։ Անձանթը հենց առաջին վայրկենից գրավեց ուշադրությունս։ Յես դիտեցի նրան։ Մոտ 16—17 տարեկան մի պատանի յեր նիւհար, զումատ դեմքով, կուրծքը փոքր ինչ ներս ընկած։ Հաղած եր մուգ-կապտագույն գոտեվոր կարճ բաճկոն, վորի կուրծքը զարդարված եր ասրյա խաչաձև ծոպերով, և նույն գույնի նեղ վարտիք։ Զենին բոնած եր մի կակուղ կանչաղպույն գլխարկի փետուրով զարդարված, նման այն գլխարկներին, վոր զնում են թափառաշրջիկ հույն անդրիավաճառները կամ իտալացի յերածիշտները։ Նրա դեմքի գծերը կանոնավոր եյին ու նուրբ, աչքերն ունեյին ինչ-վոր մելամաղձիկ արտահայտություն։ Դա այն յերշանիկ գեմքերից եր, վորոնք հենց առաջին հայացքով մարդու սրտում շարժում նն համակրության դղացում։

— Բոն-ջուրնո, ասաց նա, գլուխ տալով։

— Ոչո՞, արտի՛ստը, — զոչեց ամենից առաջ բարդիտոն կալալարոն, վոր մի բարեսիրտ մարդ եր մոտ յերեսուն ու հինգ տարեկան։

— Արտի՛ստը, արտի՛ստը, — կրկնեցին մյուսները։

Նույն վայրկենին սրար, նվագում, ծիծաղ ընդհատվեցին, և բոլորի հայացքները դարձան դեպի սպանին։

— Վո՞րտեղ եյիր, այսքան ժամանակ չեյիր յերեւում, — հարցը կալալարոն։

— Սպասեցեք, նա տխուր ե, — դոչեց Լուիզան և մոտեցավ պատանուն։ Ելի ի՞նչ ե պատահէլ, ի՞նչ չու ներս չես մտնում։

— Վո՞րտեղ եւ սինյորա Ստեֆանիան, — հարց-
րեց պատանին:

— Նրա ձայնը հուզված եր, դողում եր: Կար
այդ ձայնի մեջ մի սրտաշարժ շեշտ, վոր արտօնաց-
տում եր հեղության հետ և թափիծ.

— Ա՛ա, հասկացա, — ասաց Լուիզան, — ելի մայրդ,
յերելիք, հիվանդ ե: Խեղճ պատանի, դու սլանում ես
յերկինք, նա կպած ե յերկրին...

— Սենյորինա Լուիզա, յես ձեզ խնդրում եմ ինձ
չխղճալ, — գոյէց պատանին վերապորված, — սինյորա
Ստեֆանիան այստեղ չե՞:

— Մայրս խոհանոցումն ե:
Պատանին գլուխ տվեց չորհալի ձևով ու հեռա-
ցավ:

— Նա չափազանց տխուր եր, — ասաց Կավալլա-
րոն, — անշուշտ մայրն այս անդամ ծանր հիվանդ ե:

— Չեմ կարծում, — նկատեց Լուիզան, — այդ կինը
միշտ հիվանդանում ե վորդուն տանջելու համար:
Խեղճ պատանի...

— Խեղճ, — կրկնեց ոռւս ուսանողը կծու հեղու-
թյամբ, — բայց նա չի ուզում, վոր գուրք նրան խըլ-
ճաք, սինյորինա Լուիզա: Տեսաք, ինչպես վիրա-
վորվեց:

— Նա հպարտ ե ինչպես սպանական գրանդ, — ա-
սաց Կավալլարոն, յուր բարի աչքերը թանձը ունքե-
րի տակից դարձնելով դեպի ինձ, և հպարտությունը
սադում եր նրա հեղությանը: Սինյոր, նրա կերպա-
րանքն ինձ հիշեցնում ե իմ յեղբորը: Տաղանդավոր
ջութակահար եր, մեռալ քսան տարեկան հասակում
թևերիս վրա:

— Դուք ճանաչո՞ւմ եք Լեոնին, — դիմեց ինձ ո-
րիորդ Ռախոսն՝ հրեռակի ատամնաբույժը:

— Վո՞չ: Յերեվակայեցեք, հարեվաններ, պա-
ռունը մեր արտիստին չի ճանաչում:

— Ոո՛, այդ աններելի յե, — գոյէցին Լուիզան ու
Լուկրեցիա Կաֆարելլին:

— Իմ կարծիքով, — ասաց Կավալլարոն, — ով դե-
ղարվեստակեր ե, իրավունք չունի Լեոնին չճանաչե-
լու: Նա խիսկան արտիստ ե, այու հոգով սրտով,
արյունով, ամբողջ եյությամբ արտիստ:

Իմ հետաքրքրությունը բոլորովին գրղուվեց: Ո՞վ
մ, վերջապես, այդ մանուկը, վոր այդքան գրավել
եր հարեվաններիս համակրանքը:

— Յեթե կամենում եք, իսկույն կիծանոթանաք,
— ասաց Լուիզան. — արժե այցելել նրան յուր ապա-
րանքում: Գիտե՞ք ինչ, — դարձավ նա ընդհանուրին,
— վատ չի լինի, յեթե խմբովին գնանք մեր արտիս-
տի հիվանդ մորը տեսնելու: Այո՛, վատ չի լինի...
Ցես գնում եմ, ով ուզում ե, թող հետեւիլի ինձ,

Այս ասելով, նա անմիջապես դիմեց գեսի դը-
ները: Բացի ուսանողից և յերկրորդական բարիտոն
Բորելլիից, բոլորս հետեւեցինք նրան, նույնիսկ հա-
տամարմին Լուկրեցիա Կաֆարելլին:

Արտիստը բնակվում եր նույն տան վերին հար-
կում: Լուիզան մեղ առաջնորդեց դեպի գլւավոր
սանդուղը, բարձրացանք չորրորդ հարկը: Այնտեղից
նեղ, կեղտոտ, փայտյա սանդուղով հասանք հինգե-
րորդ հարկը, մտանք մի մթին անցք: Անմիջապես իւը-

մեց մեր քթին ճարպի մեջ տապակվող մոխ այսաւ-
խորժ հոռը:

Լուիզան կամդ առավ մեկթելանի մի ցածր դը-
ռան առջև:

— Սինյոր Զելլինի, —ասաց նա, —ձեզ համար պի-
տի առաստաղը մի ֆուտ բարձրացնել:

— Իսկ սինյորինա Կաֆարելիի համար դռները պի-
տի յերկու Փուտ լայնացնել, —հեղնեց Զելլինին կոնտ
րայլտոյի մարմնի հաստությունը, դրկելով յուր յեր-
կայն թերով նրա իրանը:

Մենք մտանք մի սենյակ, վոր մի փոքր մեծ եր,
քան մի մեծ հավաքում: Այստեղ մութ անկյունում,
պատի տակ յերեսում եր ինչ-վոր բան, նման անկող-
նակալի թե թախտի՝ չգիտեմ. սենյորա Ստեֆանիա-
տի հաղթանակամ մարմինը թաղցնում եր նրան իմ աչ-
քից: Մի քայլ առաջ դնալով, տեսա հնամաշ վերմա-
կի տակ պառկած մի կնոջ դեմք: Նրա ճակատը կապած
եր սև թաշկինակով, աչքերը հառած առաստաղին: Նա
տնքտնքում եր ու ծանր հառաչում: Նրա վոտների կող-
մում կանդնած եր «արտիստը»: Բայտ յերեսութին, նրա
միտքը կլանիած եր կամ մոր հիվանդությամբ կամ
մի ուրիշ հոգսով, վորովհետեւ մեր յերեալը աննկատե-
մաց նրա համար:

— Դե լավ, քիչ տնքտնքա, — ասում եր սենյորա
Ստեֆանիան հիվանդին, —իսոմ չես մեռնում: Սովորա-
կան հիվանդությունդ ե, ելի վաղը կանցնի: Բա-բա-
բա, տե՛ս, մոտդ ինչ պատվավոր հյուրեր են յեկել:
Համարյա իմ բոլոր կավալերներն ու դամերը: Տղա,

— դարձավ նա Լելոնին, —յերելի, այդ դու յես ան-
հանդստացրել մարդկանց:

Պատանին նայեց մեղ, չափաղանց չփոթովեց ե
շտապեց սենյակի ընդհամենը մի դույդ ջարդված ա-
աթոռներն առաջարկել յոթ հյուրերից չգիտեր վո՛ր
մեկին:

— Պարոնը բժի՞չկ ե, —հարցրեց հիվանդը, յերբ
տեսալ ինձ:

— Բժիշկ չե, պատասխանեց սինյորա Ստեֆանի-
ան, — բայց յերեկի, ցալդ բժշկից լավ կհասկա-
նա: Քո հայրենակիցներից ե...

— Հա՞յ, —գոչեց հիվանդը զարմանալով թե՝ ու-
րախանալով՝ չգիտեմ ե, դումիւր դանդաղ բարձրացնե-
լով, նստեց անկողնում:

— Հա՞յ, —կրկնեցի յես զարմացած, վորովհե-
տեկի ինչ ազդի ասես սպասում եյի այդ միջաւայ-
րում, բացի հայից:

— Այօ՛, —ասաց որիորդ Ռախիսան, —արտիստը
ձեր հայրենակիցն ե. զարմանալի յե, վոր չիմացաք
հենց առաջին տեսնելուց:

— Վո՞րտեղացիք յեք, — հարցրեց հիվանդը, խոմ
Բեսարաբիայից չկ՞ք: Վո՞չ: Ո՞ո, այդ շատ լավ ե, շատ
լավ: Ո՞ֆ-ոՓ-ոՓ, Բեսարաբիայի հայերը աստված-
չունեն, զազաններ են, չեն ուղում ցալս հասկանալ:
Տե՛ր ասոված, վոչ-վոք ցալս չի հասկանում, վոչ-
վոք:

— Ելի մի սկսիր հին յերգդ, — գոչեց սինյորա
Ստեֆանիան, — բավական ե:

— Վո՞չ, Ստեֆանիա, չեմ կարող լոել, սիրաս

այրվում ե: Դու յել մայր նս, բայց դավակդ տղա չե: Ո՞հ, յերանի իմն ել աղջիկ լիներ: Զգիտես, ինչ և անում նա: Հոր նման տանջում ե ինձ: Պարոն, —դարձավ ինձ, — այդ փշացածն իմ միակ տղան ե, հառկանում եք, միակ, ուրիշ դավակ չունիմ: Ասոված սիրեք, խելքի բերեք նրան: Նա հոր ճանապարհով ե դնում...

— Սովորական գանդատներ են, — շնչաց ական-ջիս լուկան, ուշադրություն մի դարձնեք:

Յես նայեցի լելոնին: Ամաչելուց նառ յերեսը դարձել եր պատին, մեղ չեր նայում:

Լուկան մոտեցավ նրան, բռնեց ձեռներից, յերե-սը դարձրեց յուր կողմը, ուղիղ նայեց աչքերին բա-րեկամական—վո՞չ, ալելի՛—սիրող քրոջ քնքուշ հա-յացքով: Ինձ թվաց, վոր այդ հայացքը թափանցեց մինչև լեռնի հողու խորքը: Յեվ ո՞ւմ հոդու խորքը չեր թափանցիլ այն: Լեռնը զվարթացավ և յերախտադի-տության զգացումով լցցուն առջերով նայեց խո-լուհու յերեսին:

— Յեթե որինավոր վորդի լինեք, — շարունակեց հիվանդը, — ձեղ նման պատվալոր հյուրերին այսոք այս խողաբնում կընդունե՞ր: Տեսնո՞ւմ եք, աթօններ ել չունինք: Անամոթ, ինչ ես ցցվել վայատի պիս: Զե՞ս տեսնում հյուրերիս:

Լելոնը կրկին անգամ սենյակի մի դույք աթոռ-ներն առաջարկեց մեղ: Նստել անկարելի յեր. այդ փոքրիկ սենյակում յոթութ հոդի կանգնել միայն կա-րող եյին: Լուկրեցիա Կաֆարելին յերկար չդիմա-ցավ ողի սակագությանը, դուրս դնաց: Զելինին հե-

տեվից նրան, ասելով թե «արտիստէ» մայրը մեռնե-լու ախորժակ չունի դեռ, կարիք չկար անհանգստա-նալու:

Նրանց դուրս դնալուց հետո սենյակն այնչափ գոնե ազատվեց, վոր յես կարող եյի դիտել չուրչս: Այն, ինչ վոր տեսա, ինձ հաճելի դարմացում պատ-ճառեց: Մի անկյունում կախված եյին աշխարհիս ան-վանի յերաժշտապետների, նվազիչների, յերգիչնե-րի ու յերգչուհիների լուսանկարները հովհարի ձևով միմյանց միացրած: Մյուս անկյունում դրված եր մի փոքրիկ դրասեղան, ծանրաբեռնված զանազան եժա-նագին գեղարվեստական իրերով: Այնտեղ տեսա Բետ-հովենի, Մոցարտի, Շեքսպիրի և Վագների կավյա-կիսաարձաններն աղյուսի դույնով, մի հաստ խե-ցեղենի շլի, մի կոտրված սրինդ և ուրիշ այդպիսի պարագաներ: Մեղանի առաջն պատից կախած եյին մի կիթառ, մի մանդուլինա և մի ինչ-վոր թատրոնա-կան զդեստ՝ նման Ռիդոլետոյի հագուստին: Ամենա-հետաքրքրականը մի նկար եր պոլիտրիայի վրա, վոր ներկայացնում եր յերկու պատանիների մենամարտու-թյունը բուռնցքներով մի փողոցային յերգչուհու հա-մար: Աղջիկն ընկել եր մեղ տեղ դդղված մազերով և աշխատում եր բաժանել ախոյաններին...

— Տեսնում եք, — շնչաց ականջիս Կավալլարոն, — յերաժշտություն, նկարչություն, պոեզիա, վոչինչ չի մոռացված:

Այդ միջոցին հիվանդը շարունակում եր գանգատ-վել.

— Ահա յերեք որ ե, առավոտներն ել յերեսը չեմ

տեսնում։ Նա չի քնում, Ստեֆանիա, չի քնում։ Զե՞ր վոր կարող ե հիմանդանալ, հետո յես ի՞նչ անեմ, ո՞վ կպահի ինձ։ Գիշեր ցերեկ թատրոններումն ե։ Հոր ցավը վորդուն ե անցել։ Անհծվի նրա գերեզմանը, որս սելացրեց։

— Ե՛մ միեւլնույն դանդաստները, — արտասանեց Լուիզան, — և ի՞նչպես չի հողնում այդ կինը։ Յեսամո՞ւ...

Արդարեւ, հիմանդի աչքերի մեջ յերեսում եր յեսամով հողի, թեև գեղեցիկ եյին այդ աչքերն ե գեռ բավական թարմ մոտ հիսուն տարեկան կնոջ թառամած դեմքի վրա։

Հրաժեշտ տալիս նկատեցի մի բան. Կալվալարոն թագուն է ելունի ձեռքի ափի մեջ սեղմում եր մի վոսկեդրամ, պատանին հրաժարվում եր ընդունել։ Այն ժամանակ բարիտոնը քայլերը դանդաղեցրեց, մնաց սենյակում, թույլ տալով, վոր լեռնը մեղ ուղեկցի։

Մինյորա Ստեֆանիան համառոտ պատմեց ինձ Լեվոնի մասին հետեւյալը։ Նրա հայրը յեղել ե թատրոնակըան վարսավիր և չափաղանց գեղարվեստասեր։ Համեստ, գլուխը քաշ արհեստավորը հանկարծ անձնատուր ե լինում հարբեցողության կործանիչ ախտին և վոչ առանց պատճառի։ Պարզվում ե, վոր նա անհույս սիրահարված ե մի յերգչուհու վրա։ Կուլիսների յետեսում շուտով նա դառնում ե ընդհանուր կատակների ու ծաղրի առարկա։ Արտիստներից ակամած մինչև վերջին թատրոնական ծառան ծիծաղում են նրա հանդուդն զդացման վրա դեպի մի գեղեցկուհի, վորի յերկրպագուների թվում անվանում են նաև տեղական

քաղաքավուկի, հայտնի միլիոնատեր՝ ու բարեգործ հույն Մարավլիին...

Հալածանքն ու ներքին վիշտը ներդրծում են վարսավիրի վրա այնչափ, վոր սրտի դառնությունն ողու մեջ արագ չի կարողանում խեղղել։ Մի որ նա ծեծում ե ուժիսյորին, վոր ծաղրելիս ե լինում նրա շնած մի կեղծամը, անվանելով նրան «սրիկա»։ Նըրան դրկում են թատրոնական վարսավիրի պաշտոնից։ Այդ ժամանակից նա դառնում ե ողու և փողոցների անդառնալի սեպհականություն։ Յեվ մի յերեսի կո վոստիկանները գտնում են նրան մի ծառի տակ, ձյունի մեջ թավալված, բերում են տուն։ Յերեք որ չանցած, մեռնում ե տիֆից, թողնելով կնոջն ու զավակին ճակատագրի հաճույքին։

Այրին, ամուսնու արհեստից զղված ու տանջված, ութ տարեկան լեվոնին հանձնում ե մի ատաղձագործի և ինքը սկսում ուրիշների համար ճերմակեղեն կարել։ Յերկու ամիս չանցած՝ մանուկն արհեստանոցից փախչում ե ուսումնարան։ Բարի մարդիկ տալիս են նրան ուսումնավարձը։ Նա սովորում ե գրել-կարդալը։ Այրին հանձնում ե նրան հաղուստեղենի գաճառատուն։ Մանուկը չի մնում այնտեղ։ Մի աներեվոյթ ձեռք մղում ե նրան դեպի թատրոն։ Նա գառնում ե ափիշներ բաժանող՝ որական հիսուն կոպեկով և թատրոնների վերնահարկը բարձրանալու իրավունքով։

Անցնում ե կուլիսների յետեվը, կամաց-կամաց ծանոթանում գերասանական աշխարհի հետ։ Այժմ բոլոր արտիստները ճանաչում մն նրան, բոլորին նո-

ծառայություններ և անում և բոլորը սիրում են նրան յուր հեղության և աշխառության համար։ Նա վոչ մի ներկայացում բաց չի թողնում, մանալանդ իտալական խմբի ներկայացումները։ Նա ցերեկներն ել թագունումն ե կամ նրա չուրջը։

— Սինյոր, կզարմանաք յեթե ասեմ, վոր այժմ նա յերեմն ստեղծում և նորեկ անծանոթ արտիստի համար փառք մեր քաղաքում, — շարունակեց մոր վուխարեն Լուիդան։ — Այս, այս, սինյոր Զելլինի, մի Հայուակեք, այս ճիշտ ե։ Նա ունի բազմաթիվ հույն ու Հրեա ընկերներ, վորոնք դարմանալի հավատ ունեն զեպի նրա ճաշակը և սիրում են նրան։ Դրանք կլակյորներ չեն, վո՛չ, այլ թատերասերներ։ Զգիտեմ, դուցե նրանք կաշառվում են, բայց Լեվոնին՝ վո՛չ, յերեք չի կարելի կաշառել։ Սինյոր Կավալլարո, ճի՞չտ եմ առում թե վոչ։

— Նա տղնիվ և վորպես նորածին և դպայուն՝ վորպես քնարի լար, — արտասանեց բարիտոնը։ — Նա իմ հանդուցյալ յեղոր տիպարն ե...

— Բայց ինչպես և ստեղծում անծանոթ արտիստի համար փառք, — հետաքրքրվեցի յես։

— Առաջին ծափահարությամբ, — պատասխանեց Կավալլարոն։

— Չեմ հասկանում, — ասացի յես։

— Սինյոր, յերեկ չգիտեք ինչ ասել Ե արտիստի համար ստացին ծափն անծանոթ քաղաքում։ Շատ բան, յերեմն ամեն ինչ։ Դուք թատերասեր եք, նկատած կլինեք մի յերեվույթ։ Թատրոնական սրահում նստող հասարակությունը հաղիվ և վստահանում տ...

ուաջին ծափը տալ անծանոթ արտիստին։ Շատ անգամ, հոգով հիացած յերգչի յերգով, նա ամաչում և յուր հիացումը արտահայտել։ կարող են նրան անծաշակ համարել։ Բայց ահա ոգնության և հասնում լեվոնը։ Նա աղատ և հասարակական նախապաշարումից, չի քաշում առաջին ծափը տալ։ Խումբը հետեւում է նրա որինակին։ Այն ժամանակ հասարակությունը նույնպես ծափահարում է։ Մյուս որը լրադրներում գրում են այդ ծափահարությունների մասին, և ահա անծանոթ արտիստի աջողությունը ապահով է։

— Յեթե, իհարկե, արտիստը չնորհք ունի, — ակելացրեց Զելլինին։


— Այս, իհարկե։

— Բայց քո Լեվոնը կարող ե շատ անգամ անշնորհքին ել տալ առաջին ծափը, — նկատեց Բորելլին։

— Ներողություն, — պատասխանաց Կավալլարոն, հեղնորեն ժպտալով, — մեր խմբի վերաբերմամբ դոնե նա զեռ այդպիսի սխալ չի գործել։

Յես գուցակեցի, վոր Բորելլին դեռ չի արժանացել Լեվոնի ծափին։

Վիճարանությունը գուցե շարունակվեր, յեթե կըրկին ներս չմտներ Լեվոնը։ Այս անզամ նրա դեմքը բավական հանգիստ եր։ Նա հրավիրեց Կավալլարոյին մի անկյուն և, շնչալով ականջին, բաց թողեց նրա դրապանը մի վոսկեղբամ։ Հետո իմացա, վոր մեր գուրս գալուց հետո նա իր մոր բարձի տակ գտնում է այդ գրամը։ Համամահմահմ, վոր, Կավալլարոն պիտի գրած վիճի, վիճացնում և, բերում, վերադարձնում աերով։



ՀԱՅԱՍՏԱՆԻ Ազգային Գրադարան
ԱՐԴՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

— Համառ ես, Լելոն, համառ,—դուք կավալ-
լարոն, շինով պատահու գլուխը հայրական սիրով,
Դե լավ, մի նեղանար, նստի՞ր, մի փոքր խոսենք:
Դու, իհարկե, յերեկ թատրոնումն եյիր:

— Եյի:

— Համանեցի՞ր ինձ...

— Իհարկե:

— Աղա ինչո՞ւ յերեսդ դարձնում ես ինձանթ...
Ա՛ա, կեղծո՞ւմ ես...

— Սինյոր Կավալարո, յերեկ դուք շիոթված ե-
յիք:

— Յե՞ս. ամենեվին: Սխալվում յես:

— Վո՞չ, սինյոր, չեմ սխալվում: Յերբ հանդիսա-
կե, յերբեք չեք շեղվում: Մենք ամենքս իմացանք,
վոր ձեզ բարկացրել են:

— Քեզ այդպես ե թվացել: Վոչ վոք ինձ չեր բար-
կացրել:

— Ահա տեսա՞ր, Լելոն, ինձ դեռ լավ չես ճանա-
չում:

Լելոնը նայեց Կավալարոյի աչքերին այնպիսի
պարզ ու խելոք հայացքով, վոր կեղծել նրա մոտ ան-
կարելի յեր: Կավալարոն, ձեռը դնելով նրա ուսին,
առաջ.

— Չես սխալվում, բարեկամս, յերեկ ներկայա-
ցումից մի քիչ առաջ յես խոշոր վեճ ունեցա ռեժիսո-
րի հետ:

— Վո՞չ, սինյոր Կավալարո, առացեք՝ դիրիմ-
յորի հետ, —ուղղեց Լելոնը համարձակ:

— Դու վր՞ոտեղից իմացար:

— «Ո՛ Կառլո»-ն յերգելիս, սինյոր Մարտինին
կես տան բարձր վեցը ձեղ շեղելու համար: Սինյոր
Մարտինին բոլորի վեցաբերմամբ անաչառ ե, բացի
իրանից: Ռեժիսորի պատճառով նա ձեզանից վրեժ-
չեր առնիլ: Նա քինախնդիր ե միայն յուր անձնական
հակառակորդների դեմ:

— Լսո՞ւմ եք, սինյոր, —դարձավ ինձ Կավալա-
րոն վողելորված, —այս պատահու բերանով խոսում
ե ինքն յերաժշտական բնագլուհումը և դիտողական
ձիրը:

Լելոնը վերկացավ, գլուխ տվեց, շնորհակալու-
թյուն հայտնեց մեզ մեր այցելության համար և շտա-
ռեց դեպի դոները: Այլևս նա այնքան դրավել եր ինձ,
վոր կամեցա անպատճառ հետը խոսել:

— Հայերեն դիտե՞ք, հարցը յես, յերեխ, հայրե-
նասիրական զգացումից դրդված:

— Գիտեմ:

Նա, ինչպես և յուր մայրը, խոսում եր ոռւսերեն
լեզվով տաճկական արտասանությամբ: Բառացինե-
րից միայն տանտիրուհիս և նրա աղջիկը դիտելին ոռւ-
սերեն, նաև Կավալարոն: Մյուսների հետ Լելոնը խո-
սում եր իտալերեն:

Մի քանի հարցեր տվեցի նրան պարզ հայերեն
լեզվով: Նա ապշած նայեց յերեսիս և ժպտաց:

— Չե՞ս հասկանում, —դարձա յես ոռւսերեն լեզ-
վի ողնությանը:

— Այդ լեզուն յեկեղեցական ե, —խոսեց նա տաճ-
կերեն լեզվով, —իմ իմացած հայերենն ահա այս լե-
զուն ե:

ինձ համար նորություն չեր Բեսարաբիայի հայերի մայրենի լեզու չիմանաւը: Բայց առաջին անգամն եյի պատահում մեկին, վոր տաճկերենը հայերէն եք համարում:

Յսե խնդրեցի Լելոնին այցելել ինձ շուտշուտ և իմ կողմից խոստացա այցելել նրան: Նա ինձ յերկար սպասել չտվեց: Հետելյալ որն իսկ յեկալ սենյակս և ուրախ-ուրախ հայտնեց, թե մայրն արդեն առողջանում է: Ուղիղն ասած, յս չեյի հետաքրքրվում մոր վիճակով, ինձ զբաղեցնողը վորդու ճակատագիրն եր:

Յերբ խոսք բաց արի թատրոնի ու յերաժշտության մասին, պատանին կերպարանափոխվեց, ինչպես կրակոտ սիրահար, յերբ խոսվում են նրա սրտի ընտրյալի վերաբերմսք: Վոզեւորված նկարագրեց յուր լած յերեվելի յերգիչների ու նվազիչների տաղանդը: Վերջին յոթ տարվա ընթացքում նա լսել է դրեթե բոլոր նշանալոր յերգիչներին ու նվազիչներին, վորոնք այցելել ելին Ռուսաստանն Ողեսայի վրայով:

— Յերեվի, դու յել նվազում ես կամ յերդում, — հարցրի յես:

— Վո՞չ, սինյոր:

— Զեմ հասկանում:

— Յերդելու համար ձայն չունեմ:

— Իսկ նվազելու համար գործիքներ շատ ունիս սենյակումդ: Յերեկ տեսա:

— Այո, նվազում եմ մանդովնա և կիթառ:

— Նոտաներ գիտե՞ս:

— Սինյորինա Լուիզան սովորեցրել է: Դուք լսե՞՞լ

եք նրա յերդեցողությունը: Հիանալի ձայն ունե: Այնպես չե՞՞ս: Այո՞: Հավանե՞լ եք: Իհարկե, ո՞վ չի հավանիլ: Ո՞ո, Լուիզան մեծ ապագա յե խոստանում...

Նա լոեց, հառաչեց, հայաշքը ձգելով դեպի անոլոց տարածություն: Յես նրա դեմքի վրա նշանակեցի հոգեկան գալուսի տառապանքի արտահայտություն: Խոստովանվում եմ, այն ժամանակ նշանակություն չտվեցի նրա հառաչանքին: Յեվ մի՞թե կարող եյի յերեվակայել տասնյոթ տարեկան պատանու հոգին վորեվել լուրջ վշտի ընդունակ:

— Այդ բոլորը լավ, — ասացի յես, — բայց դու ենչ չո՞վ ես կերպակում քեզ ու մորդ: Զե՞ վոր հայրդ ժառանգություն չի թողել:

— Գործ շատ կա, սինյոր: Պրոդրամներ եմ ծախում, ստատիստի դեր եմ կատարում բեմի վրա, պոչ եմ բռնում: Ա՞լս, սինյոր, յեթե միջոց ունենայի, կառվորեյի վիոլոնչել նվազել ու կմտնեյի յերաժշտական խումբը:

— Հիշո՞ւմ ես հորդ, Լելոն:

— Իհարկե, շատ լավ եմ հիշում:

— Ասում են, նա բարի մարդ եր:

— Այո, սինյոր, շատ բարի յեր, միայն...

— Հարբում եր, — լրացրի յես պատանու խոսքը:

— Նա յերեք ենձ չեր ծեծում, չեր ել բարկանում վրաս: Բայց վո՞չ, մի անդամ բարկացալ, հիշում եմ...

— Յերեվի չարություն եյիր արել:

— Այո՞: Այն ժամանակ նրա խանութն ահա այն անկյունի կապույտ տան ներքին հարկումն եր: Ամեն

որ գնում եյի այնտեղ կեղծամներ սահրռմ: Մի որ նա տխուր եր շատ: Մի ժեներալ յեկավ յերեսը սափրել տալու: Նրա մոտ միշտ մեծամեծներ եյին գալիս: Յես մերցի մի սանր, վրեն քաշեցի մի թուղթ ու սկսեցի շրթունքներովս նվազել: Ժեներալը բարկացալ ու նորս հրամայեց ինձ դուրս անել: Հայրս մոռեցավ, ականջու քաշեց ու, վզակոթիս տարով, վոնդեց դուրս: Բայց հետո, յերբ ժեներալը դնաց, կամչեց ինձ ներս, աչերս սրբեց, համբուրեց ու ասաց: «Յեթէ դու կունենաս յերաժշտական ընդունակություն, ինձ գրավ կղնեմ, քեզ չեմ թողնիլ առանց ուսման»: Այո՛, սինո՞ր, շատ լավ մարդ եր, թեև հարրում եր: Սինյոր, ներեցեք, վո՞ր ժամն ե:

— Տասնուամեկ:

— Ո՞ո, յես ուշացա: Ներողություն, ելի կը առաջ: Զեր սենյակը լավին ե: Դուք ինձ գլքեր կտաք կարգաւու, այո՞: Շնորհակալ եմ: Յահություն: Այսոր կալաֆատիի բնենքիսն ե: Թատրոնը լիքն և լինելու: Դեռք ե գնամ, պոչ բռնեմ:

Յես կամեցա հարցնել՝ ինչ ասել ե «պոչ բռնել», բայց կեռն արդեն չքացել եր:

Կալաֆատին ընտիր յերդչուհի յեր:

Գնացի թատրոն տոմսակ վերցնելու: Կասսի առջե կանգնած եր զնողների մի յերկայն չարք, վոր հասնում եր մինչև փողոցի կեռը: Յեղանակը սառն եր, խոնավ, անախորժ: Պիտի բանեյի շարքի վերջին տեղն և ամենաքիչը մի ժամ սպասեյի մինչեւ հերթա հասներ: Ուզում եյի վերադառնալ տուն, յերբ լսեցի իմ աղդանունը: Դա կեռնի ձայնն եր, վոր կարող եյի ճանաչել հարյու-

բալոր ձայների մեջ: Նա կանգնած եր կասսից մի քանի քայլ միայն հեռու, յերկու հրեաների միջև սեղմաքած:

— Տոմսա՞կ եք ուզում դնել, — հարցրեց նա տաճերեն:

— Այո՛:

— Ենկ'ք, տեղս բռնեցեք, ապա թե վոչ, շուտ չեք հասնիլ կասսին:

Յես բռնեցի նրա տեղը: Նա դնաց կանգնեց շարքի վերջում: Այդուղ միայն եմացա ինչ ասել ե «պոչ բռնել»: Լեռնը կանգնում եր շարքի յետեռում և, յերբ բավական մոռենում եր կասսին, յուր հերթը ծախում եր ցանկացողին հինդ-տասը կոպեկով: Հետո դարձյալ գնում եր ու շարքի յետեռում կանգնում: Նա ամեն մինչոց դորձ եր դնում թատրոնից հեռանալու համար: Նրա ողը, կերակուրը, կյանքը, ամեն ինչը թատրոններ:

Իմ հետաքրքրությունն այդ պատահու վերաբերմամբ արդեն այնքան մեծ եր, վոր աշխատում եյի ամեն որ նրան տեսնել:

Մի առավոտ նրա մօտ հանդիպեցի յերկու անծանոթների, վորոնց հետ յուր սենյակի գոների առջև կանգնած խոսակցում եր:

Մեկն յուր հասակի պատահի յեր՝ հնամաշ հաղուստով, բայց գլխին նոր գլխարկ: Դեմքի զծերը բուն հրեական եյին, աչքերը ղեղնագույն, մաղերը գրեթե կարմիր, յերեսը ինչ-վոր բծերով ծածկված, սակայն համակրելի:

Մյուսին յես շատ անդամ եյի տեսել քաղաքի զբո-

սալվայրերում ու թատրոնների առջև : Դա մոտ քսանու-
հինդ տարեկան յերիտասարդ եր, այնքան նիւար,
այնքան բարակ ու դունատ, վոր, կարծես, մաղաղա-
թից լիներ շինված : Նրա յերեսն յերկարավուն եր ու
նեղ, աչքերը կըսր ու փոքրիկ, կոկորդի վոսկորը դուրս
ցցված : Հարթ ու նոսր մաղերը, մինչև ունքերը քաշած
կակուղ դիմարկի տակից ցած էջնելով, յախուի պես
կոկել եյին բարակ պարանոցին և ընդդրկել կոկորդի
մի մասը : Սև սյուրտուկի վրա հաղած եր թիկնոցա-
վոր վերարկու առանց աստաղի, լայն թևերով : Մի
ձեռին բռնած եր բագկի հաստությամբ մի դեղնագույն
փշոտ փայտ, մյուս ձեռին անկազմ դրքույներ և
տեղական լրագրների համարները :

— Իմ ընկերներն են, — ասաց Լևոնը, անմիջապես
ծանոթացնելով ինձ նրանց հետ : Բանաստեղծ Զառւ-
շենկո, իցկո Մարդուլիս :

Յես հաճույքով սեղմեցի յերկուսի յել ձեռը :

— Զառւշենկոն սիրում եր մարդկանց հետ ծանո-
թանալ յուր յերկերի միջոցով, — ասաց լայն վերար-
կու հաղած յերիտասարդը, վոր ինքը բանաստեղծն
եր :

Յեկ անմիջապես, դրքույներից մեկը պահելով
քթիս առջև, հարցրեց .

— Զեյթը կամենալ, արդյոք, մե որինակ վերց-
նել :

— Հաճույքով :

Գրքույկի վերնադիրն եր. Часы горя и страданий:
стихотворения Леонида Николаевича Чашенко.

— Դուք գուցե զարմանաք, մույո, — ասաց նա,

դնելով վարտիքի գրապանը գրքույկի արժեքը, — վոր
յես, այսպես ասած, հանդինեցի կապել ձեր վիղը իմ
յերկը : Բայց մի վրովվեք, մարդիկ իրանց խիզն են
ծախում, Զառւշենկոն յուր յերկերը : Նախկին գրաշար
եմ : Ինքս դրում եմ, ինքս շարում, ինքս տպում, ինքս
վաճառում, ինքս ել ուսում իմ սրտի արյան վաս-
տակը...

— Իսկ յես նախկին և ներկա ջհուղիկ եմ, — ընդ-
հատեց բանաստեղծի խոսքը Իցկո Մարդուլիս կոչված
պատանին, — յերեմն լրագիրներ եմ ծախում, յերեմն
ել թատրոններում ծառայում : Նեղ տեղն ընկնելիս փո-
ղոցներում կոչիկներ եմ սրբում :

— Յեկ յերեկայում ե իրան ապագա Ռուբինշտեյն,
հեղնեց Զառւշենկոն :

— Ա՛խ, պարոն, արդյոք դուք յերաժշտության
ուսուցի՞չ եք : Վո՞չ : Ախոն'ս : Յես կվամենայի ձեզա-
նից դաշնամուրի վրա դասեր վերցնել : Ծիծաղիր, Զա-
ռւշենկո, բայց յես պիտի քո Կասի գորյ և ստրանի
յերաժշտության վերածեմ : Դե լավ դավագանդ
մի՞ ցույց տուր, յես յերկչոտ ջհուղներից չեմ, յես
հրեա յեմ : Արեմիթե՛րչի, սինյոր... Գնանք, բանաս-
տեղծ : Զիմբա, չիմբա — չիլալա' ...

Նա քամու արագությամբ թռավ դուրս : Զառւշեն-
կոն հետևեց նրան, հաստ գավազանի ծայրն աղմուկով
դարկելով փայտյա սանդուղի աստիճաններին :

Փառք աստուծո, այս անդամ Լևոնի մայրը տանը
չեր չնացել եր չուկա՝ պաշարեղեն գնելու : Լևոնն ա-
սաց, թե Զառւշենկոն ու իցկո Մարդուլիս յակել եյին
խորհրդակցելու իտալական խմբի առաջնորդ յերգչուհի

Բարբինիի բենեֆիսի մասին։ Պատրաստվում են արտաքս կարդի ցույցեր։ Զառուշնիոն մտադիր ե բենեֆիսի պատվին նվիրել յերդչուհուն մի բանստեղծություն, գոր պետք ե թարգմանել խոալերեն։

Եսո, Առոնին փորձելու համար, ասացի։

— Կցանկանայի իմանալ, դուք ինչ գործ ունեք յերդչուհների բենեֆիսների հետ։

— Ի՞նչպես թե դործ չունինք, — զուցեց նա զարմացած, — յերդչուհները գեղարվեստին չե՞ն ծառայում։

— Շատ ել ծառայում են, հետո՞։

— Ամեն մարդ պարտավոր ե պատվել գեղարվեստը։

— Գեղարվեստը չուայլություն ե։ Նա հարուստների համար ե։ Իսկ դու և քո ընկերներն ալքատ եք...

— Հարուստներն արտիստներին նվերներ են առնում, իսկ մենք ցույցեր...

Հազիվ մի քանի բոսեր խոսել եյինք, յերբ ներս մտավ Առոնի մայրը։ Դնելով պաշարեղենի զամբյուղը Եեքսպիրի քթի առջև, նա իսկույն եեթ հարձակվեց վորդու վրա։

— Ելի փողոցային սրիկաները այստեղ եյին, հա՞։

Յերեկի, խորհուրդ ունեյիք։ Մի շաբաթ ե դլուխս ցավեցնում եք այդ յերդչուհու բենեֆիսով։ Պարոն, տեսա՞ք խոժ, տեսա՞ք այս անդգամի ընկերներն ովքեր են։ Ի՞նչ կարող ե սրվորել այդպիսիներից։ Փո՞ւչ, վո՞ւչ զավակի...

Եերբեմն մայրերը կարող են իրանց հարազատ զավակների թշնամին լինել։ Անշուշտ Առոնի մայրը սի-

րում եր վորդում, բայց չեր տեսնում յուր և նրա մէջ յիղած վիհը, այն ահարդին վիհը, վոր չեր կարելի լեցնել ու հարթել անվերջ նախատինքներով։ Մի անդամ այս մասին խոսում եյինք մեր սեղանատանը։ սինը յորս Ստեֆանիան և Բորիկին պաշտպանեցին մոբը, իսկ մյուսները՝ վորդուն։ Բախան ասաց։

— Մեղ հրեաներիս համարում են նյութապաշտ։ Յես դեմ չեմ, ճիշտ ե. բայց, հավատացեք, վոչ մի հրեա, մանավանդ հրեուհի յուր վորդու վիերաբերմամբ այդ քրիստոնյա կնոջ չափ նյութամու չեր լինիլ։ Հրեան ինելոք կերպով ե հարստահարում յուր վորդուն։ Յեթե յուր վորդու մեջ տեսնում ե յերաժշտական կամ յերգելու ձիրք, աշխատում ե հենց այդ ձիրքը շահագործել։ Նա չի ստիպում նրան արհեստավոր կամ վաճառական դառնալ։

Յերկու անդամ Առոնն իմ ներկայությամբ լաց յեղակ, յերբ մայրը հանդիմանում եր նրան իբրև «անպետք» դավակի։ Նա վաթաթվեց մոր պարանոցին, դոչելու։

— Մամա, մամա, մի բարկանար, յես քեզ սիրում եմ։

Ո՞ո, վո՞չ, այդ պատանին չեր կեղծում։ Նա սիրում եր մորն անչափ, և այս նրա դժբախտության պատճառներից մեկն եր։

— Կարելի՞ յե, — լսեցի մի առավուտ զոների յետերից Առոնի ձայնը, յերբ դեռ անկողնից չեյի վերկացել։

Ուրախությունը հրավիրեցի նրան ներս։ Նա գլխարաց եր, յերեսն անլվա, աչքերի սպիտակուցները դեղ-

նած, մաղերը գդդղլած, դեմքը մագաղաթի պես գունատ: Կոնատակին պահած եր մանդոլինան և այնպես ամուր սեղմած, վոր, կարծես, վախենում եր ձեռքից խլեն: Նրա բաճկոնի կոճակները բաց ելին, փողկապ չուներ, շապկի յեղբերը բաժանվել ելին և յերևան ելին հանում նրա նիհար կուրծքը: Ծնկների վրա կուչեկուչված վարտիկի ծայրերը բարձրացել ելին, յերեվում ելին կոչիկների ականջները:

— Ներողություն, սինյոր, — ասաց նա, ցրված հայոքը պտտեցնելով չորս կողմը, — կարծում եյի վեր եք կացել:

Յես շտապեցի նրան հանգստացնել, թե հենց վեր եյի կենում, յերբ յեկավ: Նա խնդրեց թույլ տալ իրան կես ժամ մնալու իմ սենյակում: Վոչ միայն կես ժամ, այլ միշտ, յերբ կամենար և վորքան կամենար, կարող եր ողտպվել իմ սենյակից: Բայց այս անդամ ինձ շփոթեցրեց նրա այլայլված կերպարանքը:

— Ի՞նչ ե պատահել, — հարցրի, կարծելով վոր թագնում ե ինչ-վոր. հալածողներից:

Մի քանի վայրկյան չպատասխանեց: Յես հարցու չկրկնեցի, սկսեցի հաղնվել: Նա մոտեցալ դռներին, նայեց դեպի դուրս ու յետ յեկավ, կանգնեց սենյակի մեջտեղում, ավելի ամուր սեղմելով մանդոլինան կուան տակ:

— Գիտե՞ք, սինյոր, — ասաց, — կարող ե մայրու պալ:

— Ի՞նչ անենք, թող զա:

— Յես նրանից եմ փախել: Ուղում եր մանդոլինաս կոտրտել, վառարան դցել:

— Ինչո՞ւ:

— Մինչև լույս չեմ թողել նրան քնելու, նվազել եմ:

Հետո պատմեց, թե յերեկ ոպերային յերաժշտական խմբի բենեֆիսն և յեղել: Նրկայացումից հետո բոլոր յերաժիշտները դնացել են հյուրանոց ընթրկելու: Խմբապետը կեռնին ել հրավիրել եր: Ընթրիքի միջոցին մեկը վիոլոնչելով նվազել ե, ի միջի այլոց, և՛ մի ապանական յեղանակ՝ «Մագրիդի շրջմոլիկը»:

— Գլխից չեր դուրս դալիս այդ յեղանակը: Ուղում եյի անպատճառ սովորել հենց այս գիշեր, վոր չմոռանամ:

— Յեկ սովորեցի՞ր:

— Այո՛:

— Ինձ համար կնվազե՞ս:

Կեռնի բնավորությունը պարզ եր: Նա կոտրատվել չգիտեր, ամեն բանի վերաբերլում եր հասարակ: Յես արդեն մի քանի անդամ լսել եյի նրա նվազումը: Վատ եր նվազում թե լավ, չգիտեմ, միայն զդացվում եր և զդացնել տալիս լսողին:

Նա նստեց աթոռի վրա, գրկեց մանդոլինան: Սուավության արեգակի կիտրոնագույն չողերը սփովել եյին ներս: Լեռնի աչքերն անգիտակցարար դարձան դեպի այդ շողերը, կարծես ինչ-վոր գաղտնի մագնիսի զորությամբ: Ան, այդ վեր ուղղված աչքերը, այդ հեղինեմքը: Անցել ե ընդամենը յերկու տարի, բայց կանցնեն շատ տարիներ, դարձյալ այդ որը վառ կմնա հիշողության մեջ:

Ի՞նչ եր կեռնի նվազածը՝ բացատրել չեմ կարող:

Հիշում եմ միայն ինձ վրա գործած տպակորությունը։ Կիսամերկ բելեռել եյի սենյակիս մեջտեղում և լուս եյի բուռն զգացմունքների վիժուամը։ Վիշտ և բերկություն, փոթորիկ ու մեղմ թափիծ խառնվել եյն «Մադրիդի շրջմոլիկի» մեջ։ Պոնե այսպես եր թվում ինձ։ Գուցե դա մի կրակոտ, ասպետական ժողովրդի սրտի հրաբուղիսն եր, փոքր ինչ կանոնավորված ինձ անհայտ մի հանձարի ստեղծադործ ուժով, բայց հետաքրքրականն ինձ համար նվազողն եր։ Կարծես, իյութեղեն պատանին չքացել եր, մնացել եր միայն նրա սովորը։ Նա չեր նկատում իմ ներկայությունը, քաղցր հնչյունների հեղեղով կլանված նյարդերը չեցին դժում աշխարհի նյութեկանը։ Կարծես հոգին ամբողջովին ձուլվել եր նվազած յեղանակի հետ ու սլահել հեռու մի աշխարհ։ Ըստիր հոգիների կախարդական աշխարհ։

Յերբ ավարտեց, մի քանի վայրկյան լուս եր, անշարժ, աչքերը տակավին հառած արեղակի շողերին, վորոնք հետպհետե գունատում եյին։

Յես չկարողացա ինձ զսպել, վողեվորված գոշի։

— Կեցցե՛ս, Աւոն, կեցցե՛ս...

Բայց նա չլսեց։ Անշարժ եր. նուրբ շրթունքները, փորոնք միշտ սեղմված եյին, դողում եյին նկատելի։ Հանկարծ նրա ձեռները թուլացան, դլուխը մի փոքր թեքից ուսին, մանղոլինան հանդարտիկ սահեց կըրծքից և ընկալ նիհարիկ ծնկների վրա։ Յեզ նրա դեպի շողերը հառված աչքերի մեջ նշմարեցեացունք։

— Մանուկ, ինչո՞ւ յես լալիս, — զոչեցի կարեկցությամբ։

Նա վոտքի կանգնեց և, ճակատից հեռացնելով թանձր մազերը, տարորինալ ձայնով արտօռանեց։

— Վերունչելիսան ինձ ասաց՝ Մադրիդի շրջմոլիկը դժբախտ և յեղել։ Յուրա գեցերները յերդել են գրանդի աղջկա լուսամուտի տակ և լաց յեղել... Նրա հայրը աղքատությունից մի ոք կախվել են ծառի վրա, ինեղդվել։

Այդ ժամանակ յես չհասկացա նրա խոսքերի խորքերում թաղնված բուռն վիշտը և կարծեցի զառանցում եր։ Արդարեւ, զառանցում եր նա, բայց ինչո՞ւ և ի՞նչ...

— Ախ. ներողություն, գոչեց նա, — հանկարծ ուշքի գալով — յես... անքնությունից... .

— Այո՛, Լեռն, անքուն ես։ Յեթե կամենում ես՝ հանգստացիր սենյակումս։

— Շնորհակալ եմ, սինյոր։ Թո՛ւյլ տիկեք միայն մանդովինաս թողնեմ այստեղ։ Մայրս կարող են նրան վառարանը դցել։ Յերեկ լուսամուտով վսողոց շպըռակաց կիթառս ու մի քանի լուսանկարներ։

— Լեռն, մայրդ չար կին ե, — զոչեցի յես, մինչեւ հոգուս խորքը վրդովված այրու վայրենի արարմունքից։

Լեռնը չափաղանց վշտացալ և ոկսեց պաշտպանել մորը։ Վո՛չ, վո՛չ, չար կին չե նրա մայրը, ընդհակառակը շատ բարի յե։ Նա սիրում ե Լեռնին։ Յերեմն քնած ժամանակ Լեռնը զգում ե, վոր իրան թաղուն համբաւրում ե։ Նա սիրում ե, բայց սերը ցույց չի

առալիս, վախենում ե, վոր Լևոնն յերես առնի, ավելի
դիչանաւ:

— Ավելի փշանա՞ս, — դեչեցի յես, — բայց մի՞թե
դու փշացած ես:

— Ի՞նչ դիտեմ, սինյոր. մայրս ասում ե՞ «ո՛վ
յուր ծնողների կամքը չի կատարում» փուչ վորդի յե»:

— Եհ, ուրեմն, ինչո՞ւ չես կատարում մորդ կամ-
քը, — հարցրի դիտմամբ կամենալով վորձել նրան:

Նա մի տիսուր հայացք գցեց յերեսիս, վոչինչ չա-
սաց: Յես այդ հայացքի մեջ կարդացի նրա անգորու-
թյունը՝ դառնալ մոր կամքի հուռ զավակ: Անվիճելի
յեր, վոր նա շուտով կհրաժարվել կյանքի բոլոր բա-
րեղներեց, քան թատրոնից:

Ճաշի միջոցին պատմեցի նրա տարորինակ տրամա-
դրության մասին: Լուկովան լսեց լարված ուշադրու-
թյամբ: Նրան նկատելու չափ շիտեցրեց այս, ինչ-
վոր Լևոնն ասել եր «Մարդրիդի շրջմոլիկի» մասին: Կա-
վալարոն խորհրդավոր ժպտում եր և գլխով համուի-
մանական շարժումներ անում, Լուկովայի աչքերին նա-
յելով: Ուսանողը նկատեց, թե Լևոնն աննորմալ եյակ
ե, մի տեսակ հողեկան հիվանդ: Նրա հասակի ու զգա-
ցումների մեջ չկա համերաշխություն: Իսկ ուղեղը
զարդանում ե անկանոն: Այս նկատողությունը չափա-
զանց վրդովեցրեց Կավալարոյին: Զինայելով ուս-
տեղի քերականական կանոնները, նա սկսեց հակա-
ճառել:

— Հողեկան հիվանդ, հոգեկան հիվանդ, վերջին
ժամանակ, կարծես, դիտությունները հենց նրա հա-
մար են սովորում, վոր բոլոր տաղանդավոր մարդ-

կանց հիվանդ համարեն: Վո՛չ, պարոններ, իսկական
հողեկան առողջները հենց Լևոններն են: Միայն նրանք
դժբախտ են, ամեյոր ստուգենտ, համանո՞ւմ եք,
դժբախտ, վոր չեն ծնված կյանքի բարեհաջող պայ-
մաններում: Փոխանակ զիտնականորեն բացարելու
այդ պատանիների հողին, ողնեցեք նրանց. ահա՛ ինչ:
Մի՛ թողնեք աղամանդը փողոցի ցեխի մեջ: Ամսոս ե
Լևոնը:

— Նա որից որ հալվում ե մոմի պես, — շարունա-
կեց Կավալարոն կարեկցարար, — նրա կաղմը նուրբ է,
չի կարող գիմաննալ այդ տեսակ ալլուստի, յերբեմն
գիշերը, հաղիվ անկողին պատկած, վեր ե կինում,
գնում կանգնում ե կասսի սռաջ, առանց վերարկուի,
մի քանի կոպեկ վաստակելու համար: Վաստակածի մի
մասն ել թատրոնի վրա յե ծախսում: Ահա վաղը սենյո-
րա Բարբինիի բենեֆիտ ե: Դա նրա ամենասիրելի յերդ-
չուհին ե: Համոզված եմ, վոր այժմ իրան տանջում ե,
վորպեսզի կարողանա վորեե կերպ վաղվա ցույցերը
գեղեցկացնել...

Հետեւյալ յերեկո յես թատրոնումն եյի: Նստած
մի բարեկամ ընտանիքի հետ ոթյակներից մեկում,
նայում եյի զեսի վերնահարկ: Բազմաթիվ գլուխների
մեջ, վերջապես տեսա Լևոնին: Արմունկներն պատնե-
շին հենած, գլուխն ափերի մեջ բռնած, աչքերը հառել
եր բեմին: Նրա մի կողմում կանգնած եր բանաս-
տեղծ Զառուցնելոն, մյուս կողմում իցկո Մարգուլիսը:
Յերբ բեմի վրա յերեաց յերգչուհի Բարբենին, Լևոնը
գլուխը բարձրացրեց և ամենից առաջ ծափահարեց:

Նրան հետեւցին Զառւշենկոն և իցկոն, հետո վերնաւարկի մի մասը: Նույն վայրկյանին մի քանի տասնյակի ձեռներ ձգեցին բեմի վրա ինչ-վոր ապիսակ ու կարմիր ծաղիկներ, նաև գույնզգույն բարակ թղթի թերթիկներ: Գոյացալ մի ֆանթաստիկ անձրև: Պարտերն ակամա հափշտակվեց, և ամբողջ հինգ րոպե թատրոնը թնդում եր բուռն ծափահարություններից: Վերջնելով յուր գլխին տեղացող անձրևից մի կաթիլ՝ մի ծաղիկ, յերգչուհին սեղմեց սրտին, անդադար գլուխ տալով աջ ու ձախ, հետո աչքերը բարձրացրեց դժուկի վերնահարկ և ողային համբույրներ ուղղեց պատանի յերկրագագուներին: Այս ավելի վողեսրեց նրանց և ավելի զորացրեց աղաղակներն ու ծափերը:

Լեռնն յուր մարմնի կիսով գուրս եր յեկել պատնշի յետեխից: Կարծես ձգտում եր ծաղիկների հետ ընկնել յերգչուհու վոտների տակ իրեւ կենդանի դոչ գեղարվեստի:

Անցալ առաջին գործողությունը, յերկրորդը, յերրորդը: Լեռնի վողեսրությունը սաստկանում եր յերգչուհու աջողության հետ գուղընթաց: Նա մերթ ծափահարում եր, ձեռները գլխից վեր բարձրացրած, մերթ աղաղակում: «Եվի՞վա, բրավա՛, բրավիսամմա»...

Վերջին գործողության կիսում լեռնը հանկարծ չքացալ Զառւշենկոյի և իցկոյի հետ, մինչև ներկայացման վերջը չերևաց այլեւ:

Դուրս գալով խուռն բազմության հետ փողոց, անօտ հետեւյալը:—Թվով յերեսուն-ըստասուն վոստիկաններ կազմել եյին մի ընդարձակ շրջան՝ հեղեղված

ելեքտրական ահազին լավտերների առաստ լուսով: Թատրոնից դուրս յեկողները հավաքվում եյին շրջանի յետեւում: Մուտքի մոտ մի կողմում խմբված եյին հարյուրի չափ համալսարանական ուսանողներ, մյուս կողմում կանգնած եյին յերկու կանոնավոր չարքերի բաժանված մի խումբ պատանիներ՝ տասնուհինդից մինչև քսան տարեկան: Միակ չափահասը նրանց մեջ Զառւշենկոն եր: Նա ձեռին պահած եր մի թերթ թուղթ:

Ուսնողներից մի տասը հոգի ձեռներում բռնած եյին մի-մի փոքրիկ փունջ ծաղիկների, իսկ պատանիները մի-մի վառ կերոն:

Տեսարանը գեղեցիկ եր, հետաքրքրական: Գիտեյի վոր լեռնը հետին դեր չի կատարում նրա մեջ: Քաշվեցի մի կողմ և աչքերով վորոնեցի նրան: Դժվար չեր գտնելը: Նա կանգնած եր պատանիների շարքերից մեկի գլխին, ձեռքին մի յերկան ձող, վորի ծայրում շառվում եր հաստ մոմի կտորը: Յուզատ չե՞ր զգում նա առանց վերարկուի, նույնիսկ առանց կրկնակոչիկների, յուր բարակ պիչակում: Յերեւի, չեր զգում, թեև յեղանակը բավական ցուրտ եր: Նա հափշտակված եր յուր գերով, աշխատում եր կարգ պահպանել պատանիների շարքում: Կերոնների հրեղեն լեղվակները ելեկտրական ահատին լավտերների լուսուն ներքո ներկայացնում եյին դեղնագույն աղոտ բծեր՝ տկար, վրապետ աստղերը լուսնյակ յերեկո:

Լեռնի նիհար գեմքը ստացել եր մի տեսակ բացմանիշակագույն յերանդ: Նա հիշեցնում եր զեկադենտ նկարչի քմահաճ վրձինի տարորինակ սունդար-

գործություն։ Սակայն այդ հիմանդրութեամբ վրա աշ-
քերը փայլում էյին հղկած պողպատի պես։ Զորո
կողմից ելեքորականությամբ հեղեղված՝ նրա մար-
մինը գետնի վրա չեր ձգում ստվեր։ նա ինքը, կար-
ծես, ստվեր լիներ։ Նրա շարժումները արագ էյին,
ջղաճղական, լի ալյունով։ Յերբ խռում եր, նույն-
իսկ հեռվից ինձ թվում եր, վոր խռում են նրա բոլոր
նյարդերը, սրտի բոլոր թելերը։ Ահազին բարձության
մեջ ձայնն ինձ չեր համառմ, բայց զրադ կրայի, վոր
այդ ձայնը դողում եր հոգեկան բարձր հաճույքից յուր
բոլոր յերկալներով։ Լեռնը յերջանիկ եր։

Յերբ յերգչուհին դուրս յեկավ թատրոնից՝ յերկըր-
պագուներով շրջապատված, իցկո Մարգուկիսն ամենից
առաջ աղաղակեց. «ուռուա՛»։ Զառւշենկոն, գա-
վաղաճնով յետ մղելով նրան, մոտեցավ յերգչուհուն ու
տվեց նրան յուր ձեռքի թուղթը։ Անշուշտ, այդ նրա
վոտանալորն եր, հատկապես որպա առիթով դըր-
գած։

Լեռնը գղակը վերցրեց և ոդը գցեց։ Նրա թանձր
մագերից յերկու շերտ ընկան նուրբ հակատի վրա։
Նրա որինակին հետեւից պատահիների ամբողջ խում-
բը։ Յերեան յեկավ Զառւշենկոյի նեղ, յերկայնաճե-
ղութեալ՝ հարթ, նոսր մաղերով։ Յեկ կիսամերկ, կի-
սաքաղցած, պատահիների տհաս ձայները՝ «բրա՛վա,
բրավի՛սիմա», խառնվելով միմյանց, կարծես, սա-
ռեցին ձմեռային ողում։ Այդ վարկանին յես անիծեցի
մտքումս յերջանիկ յերգչուհուն, վոր, թնկուղ ակտ-
մա, խելքից հանել եր այդ մատաղահաս եյակներին և
վատանդի յեր յենթարկում նրան կյանքը, ով դիտի,

դուցե և հոգին։ Մի՞թե, արդարեւ, գեղարվեստն այն-
քան անողոք է յուր բարձրության վրա, վոր յուր առ-
ջև ծունկ է չոքեցնել տալիս նույնիսկ անմեղությանը։

Յերբ յերգչուհին մոտեցավ թատրոնի առջև սպասող
փառահեղ կառքին, մի քանի զույգ ձեռներ սկսեցին
արձակել ձիերը։ Կարծեցի, թե Լեռնն և սկզբնապատ-
ճառն և շտապեցի մտքումս հայշոյել բարեկամիս։
Սակայն դեռ լավ չեյի ճանաչում նրան։ Նայեցի՝
չկար վոչ լծվողների և վոչ լծողների մեջ։ Դրանք բա-
ցառապես ուսանողներ եյին, վորոնց թեթևամտու-
թյունը յերևի, անասնության եր հասնում։

Լեռնի խումբն աջ ու աջակ ուղեկցում եր կառքին՝
վառ կերպներով։ Յերգչուհին մեկմեկ ընդունում եր
ուսանողներից փնջերը, փետում ու ծաղիկները սըփ-
ռում սպատանիների վրա, իսկ ուսանողներին վարձա-
տրում ոդային համբույրներով։

Ճեղելով ամբոխը, յես մոտեցա բարեկամիս։
— Այ՛, զուք ե՞լ այստեղ եք, — գոչեց նա, հեվա-
լով, — լսեցի՞ք՝ ինչպես յերգեց, լսեցի՞ք . . .

— Այ՛, Լեռն, հիանալի յերգեց։ Բայց այդ ու-
սանողները . . . Ի՞նչ են անում . . . Մի՞թե զու հավա-
նում ես այդպիսի ցույցեր։

— Սատված մի՛ արասցե։
— Մենք անասուններ չենք, — ասաց իցկո Մար-
գուլիսը։

— Այ՛, մենք մարդիկ ենք, — գոչեց Զառւշենկոն
վրդովված։ Ե՛յ, պարոնայք սատվաններ, մի ձգեք
ձեր մունդիրի վարկը. Ե՛յ, պարոններ. ամոթ ե . . .

— Մատիկ արեք, — գոչեց Լեռնը, — ինքն եւ չի հա-

վասնում, ուղում և իջնել կանքից... Բայց վո՛չ, չի իջնում... Աա... Վիտյա, Պետրո, Մերդել, Խայս, հանգըրեք կերոնները... Վո՛չ, վո՛չ, վո՛չ, սպասեք... Նա իջնում և կառքից... Իջավ, իջավ... Զիերը լծում են... Կարիսսիմա, կեցցե՛ Բարբինի. ելլի՛վա, բրա՛վա, բրավի՛սիմա, առաջ, առաջ...

Յել, կերոնը բարձրացրած, աղաղակելով, չքաշավ ամբոխի մեջ, յուր հրեա ու հույն ընկերների հետ... Նրանց հետեւց Զառւշնկոն, լայն վերարկուի վիշերը ողի մեջ Փրփոացնելով՝ պատառութած առադաստիների պես...

Յես տուն վերադարձա ծանր տպավորության տակ: Այդ գիշեր յերազումս տեսա Լևոնի հորը: Թըշվա՛ռ վարսավիր: Նա հարբած, կեղտու ու սպատառութած հաղոսում չնթուկել եր թատրոնի մուտքի առջև: Անցրդները հեղնում ու ծիծաղում եյին նրա անհույս սերը, վոր, ո՛վ գիտե, դուցե առաջացել եր գեղարվեստի սիրուց: Այսպես եյի յես միշտ պատկերացնում վարսավիրին, այսպես ել տեսա նրան յերազումս...

Զարթնելով վափագ զգացի Լևոնին տեսնելու: Բարձրացա վերեւ: Տանը չեր: Մայրն ինձ հանդիպեց արտասուքը աչքերին և գանգատվեց, թե գիշերը տուն և վերադաշել յերեք ժամին: Այսոր զարթնել եթե չե, իսկույն տնից դուրս և յեկել:

— Պարոն,—ալերսեց այրին,—դուք կարող եք նրան խելքի բերել: Նա սիրում է ձեզ, կլան ձեր խոռքը: Նա գնում է հոր ճանապարհով: Վերջն իրան հար-

բեցողության կտա և շան պես կթավալվի փողոցներում:

— Նա այդ չի անիլ, խելոք եւ:

— Ալս, պարոն, կարծում եք՝ հայրը հիմա՞ր եր: Վո՛չ, նա ել խելոք եր: Բայց խելքից հանեցին, որու սեացրին: Այսունուռ ձեռքիցս խելցին, չեմ ուղում վորդուս ել խելն... Պարոն, ոգնեցեք, յես մայր եմ, հասկանում եք, մայր...

Այս', մայր եր այդ կինը, գիտեյի, վոր սիրում և վորդուն ու տանջվում նրա պատճառով: Այժմ խղճում ու մինչեւ անդամ ցավակցում եյի նրան. բայց դարձյալ անախորժ եյին ինձ համար նրա անվերջ պանդատները, նրա յեսամոլ հոգացողությունը վորդու համար:

Կեսորից հետո կրկին բարձրացա վերև: Այս անդամ կեռնը տանն եր, բայց անկողնում պառկած: Նրա վտիտ այսերի վրա նշմարեցի անսովոր կարմրություն: Բռնեցի բազուկը. յերակը զարկում եր ուժեցին: Անշուշտ յերեկ մրսել եր: Բայց չեր հանձն առնում հիվանդությունը: Նա ուրախ եր և, ուղարկելով մոր բացակայությունից, հայտնեց յուր ուրախության պատճառը: Բարձի տակից հանեց մի լուսանկար և, ցույց տալով հարցըրեց.

— Ճանաչո՞ւմ եք:

Այդ յերեկիլա յերաջնիկ յերդչուհու լուսանկարն եր:

«Իմ սիրելի արտիստին», կարդացի լուսանկարի ճուիկարին:

— Ամենքն ել ինձ արտիստ են կոչում, — տապաց Ահ-

վոնը, — չգիտեմ ինչու: Այսոր գնացել եյի նրան չնոր-
հավորելու յերեկվա աջողության համար... Ծաղիկ-
ներ եյի տարել: Հրավիրեց ներս, կաֆեյով հյուրասի-
րեց: Բավական խոսեցինք... հարցնում եր՝ ինչքան եմ
վաստակում: Խարեցի, ասացի՝ հայրս ժառանդություն
ե թողել: Վախենում եյի, զոր փող առաջարկի ինձ:
Կա նվիրեց ինձ յուր լուսանկարը: Յես համբուրեցի
նրա ձեռը, նա ել իմ ճակատը: Ո՞ս, սինյոր, յես շատ
յերգչուհիներից ունիմ այդպիսի նվիրներ, ահա՛, այն
ալլումը լիքն ե...

Յեկ այս մարձատրությամբ նա գոչ ու յերջա-
նեկ եր:

— Բայց յես մի լուսանկար ունիմ, — շարունակեց
նա, — այլումում չեմ պահում: Մայրս սպառնում է
բոլորն այրել, վախենում եմ այս մեկն ել այրի... խ-
կույն ցույց կտամ...

Նա բարձրացավ տեղից, պիջակի գրպանից հանեց
մի ծրար, ծրարի միջից թանկապին լուսանկարը: Յես
կարգացի հետեւյալ մակագիրը. «Իմ սպառնա յերկը-
պաղուին—լուիդա»:

— Ո՞չ, ճիշտ ե, բոլորովին ճիշտ, սինյոր: Յես
նրա սպառնա յերկը պազգուն կլինեմ: Լուիզան փայլուն
ապագա ունի. կտեսնեք, սինյոր, կտեսնեք... Բայց
այս ի՞նչ ե, զլուխս սպառնեց, պառկեմ...

Յերբ տիկին Ալմաստը—Լելոնի մայրը—ներս
ժտավ, խորհուրդ տվեցի բժիշկ հրավիրել: Լեռնը գլու-
խը բարձրացրեց, նստեց անկողնում: Ի՞նչ բժիշկ, ո՞վ
է հիվանդ, հարկավոր չե բժիշկ... Յես հասկացա նրա

միտքը, վախենում եր, վոր բժիշկն արգելի նրան տնից
դուրս գալու:

Յերեկոյան յոթ ժամին յերրորդ անողամ բարձրա-
ցա վերև և նրան չտեսա: Տիկին Ալմաստն ասաց, թե
իմ դուրս գալուց հետո թաղուն հազնվել ե ու փա-
խել...

Անմի՛տ պատանի. Նա վտանգի յեր յենթարկում
եր կյանքը: Յես խսկույն դուրս յեկա փողոց. գիտեյի
ուր կարող եր լինել: Հանդիպեցի նրան թարոսնի
մուտքի առջև:

— Պարոններ, չե՞ք կամենում պրոդրամ գնել, —
դիմում եր նա անցորդներին, առաջարկելով նույն որ-
կա ներկայացման ծրագիրը:

Մարդիկ անցնում եյին անտարբեր, անդամ չնա-
յելով նրան, իսկ վոմանք կոպտությամբ գոռում եյին.
«Գնա՛, կորիր»: Յեկ Լեռնի հապարտ հոգին կրում եր այդ-
վիրավորանքները համբերությամբ: Իմ սիրաը մոր-
մոքվեց, յերբ նայեցի նրա կապտած դեմքին:

— Գնա՛ տուն, դնա՛—խնդրեցի յես, — գու բոլո-
րովին հիվանդ ես...

— Ո՞վ ասաց հիվանդ եմ: Մա՞յլս: Նա միշտ կամ
երան ե հիվանդ. յերեսակայում կամ ինձ: Այս յերեկո
նոր ոպերա յե ներկայացվում, յես տո՞ւն դնամ: Վոչ,
սինյոր, ահա՛ իմ տունը...

Նա ցույց տվեց թարոսնը և ժպտալով հեռացավ:
Հեռվից լսում եյի նրա ձայնը.

— Պարոն, պրոդրամ, պրոդրամ, չե՞ք կամենում,
նոր ոպերա յե, հետաքրքրական. պրոդրամ, հատը
առաջ կոպեկ...

Մյուս որն առավոտյան գարձյալ բարձրացա վերև
և եթի նրան անկողնում տեսա: Միւնույն տանը բնակ-
վում եր մի հրեա բժիշկ: Շտավեցի նրան հրավիրել:
Քննեց հիվանդին, զրեց ինչ-վոր դեղ: Յերկու որ հա-
զիվ կարողացանք լեռնին տանը պահել, յերկորդ յե-
րեկո լաց յեղավ, յերբ արդելեցինք թատրոն գնալ:
Բարերախտաբար, յերբորդ որը տաքությունն անցավ:

Ջմեռային սեղոնը վերջացավ: Իմ հարեւան ար-
ախտները հենց մեծ պասի առաջին որն ուղեռվեցին
իրանց հայրենիքը: Այդ որը տիսուր որ եր վոչ միայն
լեռնի, այլև ինձ համար. այնքան արդեն, վարժվել
ելի հարեւաններիս գլխանին:

Մենք մինչև կայարան ուղեկցեցինք իտալացինե-
րին: Հրաժեշտ տալիս, կավալլարոն յերեք անդամ բա-
րեկամաբար համբուրդեց լեռնի հետ...

Հենց նույն որը լուիզան ինձ ասաց, թե ինքն ել
ամենատուշը մի ամսից ուղեռվելու յէ իտալիա: Հարցը
վճռված եր. սինդրա Ստեֆանիան վազուց ե հաշտվել
աղջկանից բաժանմելու մտքի հետ:

Յերբ հայտնեցի լեռնին լուիզայի ուղեռության
մոտալուց ժամանակը, ինձ այնպես թվաց, վոր լուրը
նրա վրա առանձին տպավորություն չդորձեց: Գուցէ
այդ նրանից եր, վոր նույն որերը նա առհասարակ
շատ տիսուր եր արամադրված: Մեծ պասի առաջին
շարաթն եր, թատրոնները փակ եյին: լեռն ամեն որ
գնում եր քաղաքային թատրոնի շուրջը գտնվող զեղե-
ցիկ պարտեզը, նստում այնտեղ ու նայում հսկայական
շինությանը: Հետո գլուխը կրծքին թեքած, ով գիտե-
ինչ խորհրդածությունների մեջ վերադառնում եր

առւն: Նա նորոգել եր տվել մոր ձեռքով լուսամուտից
փողոց շպիտված կիթառը, նվազում եր: Յերեմն դա-
լիս եր ինձ մոտ և իմ առաջարկությամբ մանդոլինա
նվազում: Մի անգամ թախանձեցի նրան կրկնել «Մադ-
րեդի շրջմոլիկը»: մերժեց:

Ուղերային փոխարինեց դրաման: Մեծ պասի առա-
ջին կիրակուց սկսվեցին ներկայացումները: Լեռնը
մտավ յուր դերի մեջ, բայց վո՛չ նախկին սիրով. դրա-
ման ոսկերայի չափ չեր սիրում, մանավանդ, վոր յեկվոր
խմբի մեջ չկային զրավիչ ուժեր: Սակայն պատահուն
պաշարել եր ուրիշ տեսակ աշխույժ, վոր ինձ անհան-
գոտացնում եր: Նա ամեն որ դալիս եր ինձ մոտ, վերց-
նում մանդոլինան, նստում լուսամուտի մոտ, նվա-
զում «Մադրեդի շրջմոլիկը»: Յերեմն հանկարծ ընդ-
հատում եր նվազումը, մանդոլինան շտապով գնում
սեղանիս վրա ու դուրս վազում: Նա գնում եր լուիզա-
յի մոտ, նստում և յերկար ու յերկար հարց ու փորձ
անում առաջիկա ճամբորդության մասին: Յեկ բարե-
սիրտ լուիզան յերեք չեր ձանձրանում նրա հարցե-
ցից, վորովհետև նրա համար հաճելի յեր խոսել յուր
ապագայի մասին:

— Գիտե՞ք, — դարձավ ինձ մի անգամ Ռախման, —
նա ուղղակի սիրահարված ե լուիզայի վրա: Այս, կա-
րող եմ յերգվել, վոր սիրահարված ե:

— Զգույց յեղեք, որիորդ, — ասացի յես, — լեռ-
նը կսի ու կվշտանա:

Յես հիշեցի թշվառ վարսավիրին և վախեցա՝ մի
գուցե վորդին յենթարկվի հոր վիճակին: Բայց, բարե-
սիրտաբար, լուիզայի շրջապատողներն ավելի խելա-

ցի եյին, քան այն յերգչուհու շրջանը, վորի վրա սերահարլած եր յեղել վարսավիրը: Ռախիսան խոսք տվեց ինձ այլևս չխոսել կեռնի նվիրական դզացումների մասին...

Հասավ, վերջապես, որիորդի ուղևորության որը: Մի շաբաթ եր՝ կեռն անճանաչելի յեր դարձել. նա ուրախ եր ու զվարթ: Կարծես, ինքն եր պատրաստվում ճանպարհորդելու: Գնում եր, գալոս, խոսում, զվարժախոսում: Զգիտեր ինչ աներ կուիզայի սիրու շահելու համար: Ուղևորության նախընթաց յերեկո կուիզան, ցույց տալով մի արծաթե գրչակոթ, ասաց.

— Տեսէք ինչ խելագարություն ե արել ձեր հայրենակիցը: Զե՞ վոր այս նրա մի շաբաթվա աշխատանքի վարձն ե:

— Նա նվիրել ե ձեղ այդ գրիչը, վոր նամակներ գրեք իրան, — ասացի յես:

— Այս՝ և յես կզրեմ նրան: Խնդրեցի նրան յետ վերցնել նվերը, վերավորվեց, քիչ մնաց լաց լինի:

Գնացքն ուղելորփում եր առավոտյան տասը ժամն: Մենք, սինյորա Ստեֆանիայի բոլոր կենողներս, գնացինք կայարան կուիզային ճանապարհ դնելու: Կարծում եյի, կեռն ամենից առաջ յեկած կիրնի այնաեղ: Սակայն նա չկար և չերեւաց յերկար ժամանակ: Այս անսպասելի յեր. ի՞նչը կարող եր խանգարել նրան վեր ջին անդամ տեսնելու կուիզային:

Սինյորա Ստեֆանիան ինձ հաղորդեց, թե կավալարոյից մի շատ սիրալիր նամակ ե ստացել: Յերգիշն ուրախությամբ հանձն և առնում հոգալ իտալիայում կուիզայի մասին, ղեկավարել նրա առաջին քայլերը.

— Նա շատ աղնիվ մարդ ե, — ավելացրեց տանտիրուհիս ուլուսի-ուլուսի, — հարազատ յեղբոր պես կնայի կուզիային: Յես աղջկանս բաց չեյի թողնիլ, յեթե չիներ կավալլաբոն...

Յերեք կուիզային այնչափ զվարթ ու զվարճախոս չեյի տեսել, վորչափ այդ որը, չնայելով վոր մինչեւ կայարան գնալն յերկու անդամ արտօսալել եր մորից բաժանվելու պատճառով: Մի վայրկյան անդամ չեր հանգստանում, թռչկոտում եր ինչուն յոթ տարեկան աղջիկ, քրքջում եր, հրճվում յուր ճամբորդությամբ: Ամենքիս հետ կատակներ եր անում և բոլորին խոստանում առանձին-առանձին նամակ գրել: Նա լի յեր ապադայի վերաբերմանը քաղցր հույսերով և այդ հույս սերը չեր թաղցնում մեղանից: Մի յերկու տարուց հետո կվերադառնա մշակված, կատարելագործված ձայնով, կսկսի յերգել ոպերայում: Տեսէք, ի՞նչպիսի աջոնով, կսկսի յերգել ոպերայում:

«Իսկ նա՞ — անցավ մտքովս ակամա, — նրա մասին չե՞ս մտածում»:

— Բայց ո՞ւր ե կեռնը, — հարցրեց կուիզան հանկարծ, կարծես, գուշակելով իմ միտքը. — ա՞հ, իմացանչու համար ե ուշանում: Ռիշելիի ի փողոցով անցնելիս տեսա երան ծաղկավաճառի խանութթում: Այդ պատճառու սիրու ովկիանոս ե, ընդարձակ... Ահա՛ նա, դալիս ե... Տեսէք ինչ ե բերում, չեյի՞ առում... Անուղղելի՛...

Ճեղքելով կայարանի ամբոխը, կեռնը մոտեցավ մեղ մի գեղեցիկ փունջ ձեռին: Շատ վազելուց քրտնել եր ու աստիկ հեռում եր: Դիմէ ով ուղղակի կուիզա-

մին, զգակը մեր; բեց և, գլուխ տալով, վունչը ներկայացրեց :

Արդեն լավ ճանաչելով նրան, յես վախեցա միայն մի բանից՝ Լուիզայի հանդիմանությունից։ Յեթե ուրիողն առնենաթեթև ակնարկ անդամ աներ, թե այդպիսի մի նկեր բոլորովին չի համապատասխանում կառնի աղքատ գրպանին, գիտելի, պիտի չարաչար վիրավորեր նրան։ Բայց նա նրբազգաց գտնվեց. իսկույն ըմբունեց Լեռնի հոգեբանությունն և այնպես հայտնեց յուր չնորհակալությունը, այնպես ժամաց, հոտ քաշելով վինջից, այնպես գովեց նվերը, վոր պատահուայտերը կարմրեցին ներքին հաճույքից։

Այդչափ սրտագետ չգտնվեց Ռախան. նա հարց-րեց Լուիզային.

— Կավալյարոն քեզ զիմավորելու յէ Միլանում։

— Այո՛, պատասխանեց սինյորա Ստեֆանիան։

— Մի՛ թե նա այնտեղ ե, — հարցրեց Լեռնը հուգած, դողդոջուն ձայնով։

— Նա յեկել է Միլան հատկապես Լուիզային դիմավորելու համար, — պատասխանեց սինյորա Ստեֆանիան մի առանձին հաճույքով։

Այն հոգեկան հաճույքը, վոր մի ժպտով Լուիզան պատճառել եր Լեռնին, վայրկենաբար չքացավ, տեղի տալով դադանի նախանձի կրծող կրքին։ Բայց Լեռնը գիտեր զսպել իրան չափահաս տղամարդի պես։ Նա առաց.

— Այդ լավ է։ Մինյոր կավալլարոն կողնի սինյորինա Լուիզային։

Յերկրորդ զանդակի միջոցին Լուիզան ոկաց վիր-

ջին հրաժեշտը տալ։ Նա արավ ավելի, քան կաբելի յեր սպասել նույնիսկ յուր նման մի բարի, հասարակ և պարզասիրու որիսրդից, վոր վարակված չեր նախապաշարումներով։ Ազատվելով մոր գրկից, ամենից առաջ կեռնի ձեռն առավ և... Համբուրվեց նրա հետ պարզ ընկերական կերպով։ Հետո, չտապ-շտապ սեղմելով մեր ձեռքերը, վունչը ձեռին բարձրացավ կառախումը։

Յես դիտում եյի Լեռնին։ Նա բեկեռվել եր նույն տեղում, ուր արժանացավ Լուիզայի հրաժեշտի համարույրին, և նայում եր այն լուսամուտին, ուր պիտի յերույրը։ Բնազդաբար բունեցի նրա թերց և մի բեար որիսրդը։ Բնազդաբար բունեցի նրա թերց և մի վոքը հեռացըի կառախմբից...

Ահա յերեաց Լուիզայի զվարթ գեմքը լուսամուտից։ Նա ողացին համբույրներ եր ուղարկում մեզ։ Մի քանի ողացին համբույրներ եր ուղարկում մեզ։ Մի կառախմումը եմ, և լույեց յերկրորդ զանգակը, ու կառախմումը կամացուկ շարժվեց, այնպես անազմուկ, վոր կարծեն, նավ եր լողում։ Այն ժամանակ միայն Լեռնը սթափվեց և գիտարկը բարձրացնելով, գոչեց իսութերեն։

— Բարի ճանապարհուն... Ցտեսություն... Շուտով առո՞վ...

Տուն վերադարձանք յերկուսս միասին ձիւքարշով։ Ճանապարհին Լեռնը մի բառ անզամ չարտասանուց։ Լուր եյի և յես չեյի կամենում ընդհատել նրա մտքելուը։ Թե նա տանջվում եր՝ այս պարզ եր ինձ հարի թելը։ Թե նա յերջանիկ եր Լուիզայի համբույրով՝ այս կերեսում եր։ Բայց թե ի՞նչ եր մտածում՝ այս չիմացաւ. յերկում եր միայն, վոր նրան զբաղեցնողը սովորական մի միտք չե...

ՑԵՌ ՀՐԱՎԻԲՐԵԳԻ ՆՐԱՆ ՍԵՆՅԱԿԸ : ԻՆՉ-ՎՐՈ ՊԱՄԵՆԱ-
ՊՈՎ ՀՐԱԺԱՐՎԵԳ ԴԱԼ : ԱՐԱՊ-ԱՐԱՊ ՐԱՐՃՐԱՆԱԼՈՎ ՎԵ-
ՐԻ, ՀՔԱԳԱՎԻ ՀԻՆԳԵՐՊՐԴ ՀԱՐԻԿ ԲԱՐՃՐՈՒԹՅԱՆ ՄԵջ :

Այդ որից ավելի քան մի շարաթ անցավ, յես նրան
չտեսաւ : Ինքը չեր գալիս սենյակս, խև յես բարձրա-
նում ելի վերև և միայն մողը հանդիպում :

— Ուշ գիշերին տուն և գալիս սենյակս, յերբ յես
քնած եմ, առափոտը դնում եմ, յերբ քնած եմ : Բայց լաղ-
ՎՈՐԴԻ յե, ամեն որ սեղանի վրա թողնում և հիսուն
կողեկ վողորմություն... անհծվի՛ նար...

— Տիկին, — գոչեցի յես բարկացած, բոլորովին
ՀԱՄԲԵՐՈՒԹՅՈՒՆԻց դուրս գալով. այրու անվերջ անհծը-
ներից, — նա ձեր ծախքը տալիս ե, հերիք ե, ել ի՞նչ եք
ուշում...

Ոեղձ կինն ապշած նայեց յերեսիս ու մի քայլ յետ
որեց : Յերեմի շատ ելի բարկացած, և նա չեր սպասում
իմ կողմից այլքափ կոպտություն : Յես զղջացի . ինչ և
միներ, նա գժբախտ եր, դոնե այդպես եր ՀԱՄԱՐՈՒՄ
իրան :

— ՀԵՏԱՔՐՔՐՎԵ՛Լ եք, արդյոք, ուր և դնում ամեն
որ, — հարցը յես, ձայնս մեղմացնելով :

— Շատ ել հետաքրքրվում եմ, վոր չի ասո՞ւմ :
Կիթառն ել ամեն որ հետը տանում ե: Բայց յես կիմա-
նամ, ուրը և դնում, կիմանամ . չեմ թողնիլ, վոր կորչի
հոր տես...

Զարմանալին այն եր, վոր թատրոնների շուրջն ել
չեցի հանդիպում Լևոնին : Յես կատարելապես տիրում
ելի առանց նրան, մանաւանդ վոր սինյորա Ստեֆանիա-
յի սեղանատունը դրկիել եր յուք հրապույթից : Այնտեղ

այլես չեյին հնչում Լուիզայի մետաղային ձայնն ու
վարակիչ ծիծաղը : Սինյորա Ստեֆանիան նրա ուղևոր-
վելու հենց յերկրորդ որը դաշնամուլը վերադարձել
եր յերաժշտական խանութ, ուսկից վերցրած եր ամսա-
վարձով : Զկար վո՛չ նվազող, վո՛չ յերգող, վո՛չ ծիծա-
ղող : Ռախանն և ուսանողը մտերմացել եյին ու զրադ-
ված եյին իրանց մտերմությամբ : Ավարտելով ճաշը,
նրանք շտապում եյին հեռանալ իրանց սենյակները :

Յես ուրախությամբ կտեղափոխվելի մի ուրիշ բնա-
կարան, յեթե չխանգարելի Ստեֆանիայի դրությունը :
Նրա սենյակնելի մեծ մասը դատարկ եր, յեթե յես ել
դուրս դայի, խեղճ կինը պիտի գնաս կըեր :

Մի անդամ ճաշից հետո բուլվարումն եյի : Այստե-
ղից բացվում եր Ողեսայի գեղեցիկ տեսարաններից
մինը : Մոտ յերկու հարյուր վոտնաչափ բարձրությու-
նից յերեւմ են ամբողջ նավահանգիստն ու ծովածոցը
իրանց հազարավոր նավերով : Յես վաղուց եյի կշտացել
այդ տեսարանից : Նստած ամբոխից հեռու մի առանձ-
նակի նստարանի վրա, յերաժշտություն եյի լսում : Ա-
կամա հիշում եյի Լևոնի մանղովինան, վոր տասն որ
եր, վորբացել եր սեղանի վրա : «Ո՞ւր և նա այժմ, —
հարցնում եյի ինքս ինձ, և հարցը մնում եր հարց :

— Բոնժուր մոսյո, — լսեցի մի թույլ թոքախտա-
վոր ձայն :

Գլուխս բարձրացրի և խմ առջև տեսա Զառւշենկո-
յին իցկո Մարգուլիսի հետ : Այս հանդիպումն ինձ ու-
րախացրեց : Յես սեղմեցի նրանց ձեռքը և իսկույն
հարցը Լևոնի մասին :

Զառւշենկոն հաստ գալազանը բարձրացրեց լաբ

վերտրկուի տակից և, ցույց տալով նավահամգիստը,
թատրոնական յեղանակով ասաց .

— Այսուղ ե :

— Զառուշենկո, ինչո՞ւ այսոր ձեւը տրադիքական
են, — ասաց Իցկոն :

— Վորովհետեւ, սիրելի ջհուղիկս, այսուղ ե կա-
տարիլում կյանքի տրադեղիան : Մարդիկ տանջվում են
ու մեռնում խավարի մեջ : Գնա՞նք, տա՛ր ինձ այսուղ,
Իցկո : Զառուշենկոն արխատոկրատ բանաստեղծներից չե,
վորոնք խորչում են ամբոխից : Մաքսիմ Գորկիյի գրած-
ները չես կարդացել, Զառուշենկոյինը կկարդաս : Ութ
տարի ուսումնասիրել եմ արճիճային աշխարհը : այժմ
ուզում եմ ուսումնասիրել նավահամգստի ամբոխը :
Գնա՞նք, պարոն, — դարձալ նա ինձ, — դուք ել դրոգ
եք, գնանք, մի՛ ամաչէք :

— Գնանք, ուր վոր ուզում եք, միայն թե Լեռնին
ցույց տվեք :

— Իցկոն մեզ կառաջնորդի : Նա խավարի ծնունդ
է : Հայրը նավահամգստում հին լաթեր ու յերկաթ ե
ժողովում, պիտի իմանա խավար աշխարհի բոլոր խոր-
շերը յուր ձեռքի ալիի պես :

— Իսկ դու պիտի լուսավորես այդ խավար աշխար-
հը ահա գրանցով, — ասաց Իցկոն, զարկելով բանաս-
տեղծի ձեռքի գրքույկներին : — Քանի՞ որինակ ես վեր-
ցրել : Տա՞սը : Կիարջենք, միամիտ կաց : Եո՛ւ, չիմբա-
չիմբա, չիլալա... Զառուշենկո, չիլալա :

Նա ձախ վոտը բարձրացրեց և, աջ վոտի վրա վոտ
առսաալով . վաղեց առաջ :

Բնեսայի նավահամգիստը քաղաքի հետ միացած

ե մի հսկայական քարե սանդուղով, վորի բարձրու-
թյան վրա բուլվարի մեջտեղում կանգնած ե քաղաքի
հիմնադիր Ռիշելիեյի աշճանը, իսկ ստորոտում կա-
ռուցված ե մի վորքիկ յեկեղեցի՝ նավահամգստի բնակ-
չության համար : Մենք իշանք այդ սանդուղով, մտանք
մի աղեղնածն լայն վողոց : Այդ վերջին վողոցն ե գե-
պի ծովափը, այնուհետև ամբողջ նավահամգստի յեր-
կայնությամբ բարձրանում ե «Եսթակարդան»՝ յերկա-
թուղու բնունակիր զնացքների համար կառուցված կա-
մուրջը : Գիշեր-ցերեկ այս հսկայական կամրջի վրայով
սուլելով անցնում են չոփեկտոքերը, քարշ տալով վա-
զոնների յերկայն շարքերը, իսկ ներքեւ, բաղմաթիվ
կամարների տակով անց ու դարձ են անում բնունակիր
սայլեր, նավաստիներ, բանվորներ : Այդ մի աղմկալի
վայր ե, մի բարդ հանգույց ծովային և ցամաքային
կյանքերի միջև : Շոգենավերի թանձը ծուխը, նավաս-
տիների կոշտ ձայները, ևսթակապայի խուլ թնդյուննե-
րը զնացքների ծանրությունից, կարարաններում կուտ-
ված քարածնի վույլն՝ այս բոլորը ընդհանուր առմամբ
անսովոր մարդու վրա ճնշող տպակորություն են գոր-
ծում :

Իցկո Մարդուկիսը մեզ առաջնորդեց քարածնի փո-
շով ծածկված փողոցի խորքը : Յերբ յեկեղեցուց հեռա-
ցանք յերկու հարյուր քայլ գեղի աջ, մեր առջեւ բաց-
վեց ողեաների, ստորին տեսակի թեյատերի ու պան-
դոկների մի ամբողջ ալան : Այստեղ եր վիստում նավա-
համգստի բնակչության մեծ մասը : Պանդոկներից լու-
վում եյն հարժոնիայի և ռուսական վողորմելի «բա-
լալայիա»-ի հնչյուններն ամբոխի աղաղակների, յեր-

գերի, զոռում—դոչյունների, հիշոցների ու անեծքների հետ։ Նրանք, վորոնք ժամանակ ու միջոց ունեին, ուստում, խմում ու հարբում ելին պանդոկներում, վայելելով եժանադին հուրիների ընկերության հաճույքը։ Իսկ նրանք, վորոնք միմիայն խմելու համար փող ունեին, մտնում ելին «Մոնոպոլ» կրավակները։ Այս-
տեղ վերցնելով կնքված շիշեր՝ դուրս ելին զալիս փո-
ղոց և բովանդակությունը դատարկում իրանց բերան-
ները։ Ողին արդելվում ե խմել «Մոնոպոլ» կրավակնե-
րում, ուստի հարեցնողությունը, վոր առաջ քիչ թե
շատ ամոթ ուներ և թագնվում եր ողետների պատերի
մեջ, այժմ թաղափորում ե փողոցում ամենայն համար-
ձակությամբ։ Յեվ ահա նրա վողորմելի զոհերը թավար-
ված ելին կրավակների առջե, մայթերի վրա, փողոցի
մեջ տեղում՝ սալերի ու կառքերի տակ ջարդվելու
վասնդին յենթակա։

Իցկոն կանգ առավ մի մեծ պանդոկի առջե, վորի
դուների ճակատին զրված եր. «Արքայական յախտա»։

— Ահա այստեղ ե Լեռնը, — ասաց նա. — անցյալ
շաբաթ «Վոսկե խարիսխումն» եր նմագում։

— Հըմ, — արտասանեց Զառուշնեկոն, դառնալով
ինձ, — տաստանվում եք։ Վախենում եք մտնել։ Քա՞զ
յեղեք, ձեզ չեն ուտիլ, մեղ նման մարդիկ են...

Նա գավազանը բարձրացրեց և հաղթական քայլե-
րով մտավ իցկորի հետ պանդոկ։ Յես մի քիչ նրանից
լավ եյի հազնաված։ «Աղա» չհամարվելու համար, վե-
րաբերեաւ ոձիքը բարձրացրի, գլխարկա յեզրը քաշեցի
աշքերիս, հումալով, վոր ամենաշատը հույն փորմնա-
գիր կհամարեն ինձ։

Պահպոկը լի յեր հաճախորդներով։ Առաջին պահ
վոչինչ չկարողացա վորոշել, այնքան մթնոլորտը տո-
գործված եր ծխով, փոշով ու կերակուրների շոգեխով։
Դժվար եր ընդհանուր աղմուկի, գոռում—դոչյանների
ու հայոյանքների մեջ մի բան հասկանալ։ Այցելունե-
րի մի մասը խմբվել եր բուֆետի առջե, վոր գանվում
եր ուղիղ մուտքի դիմաց։ Մենք հրավիւմ ելինք այս ու
այն կողմ։ Զառւշնեկորի նիհար մարմինը պնդակազմ
նավասահների ուսերի հարվածներից առաջեղի պես
թուշկուտմ եր. Յերբեմն նա իրան դիմող մեջքերին
դեմ եր առաջ գալարանի կոթը, ինքը յետ կանդնում։
Իցկոն, յուր փոքրության շնորհիվ, կատվի ճարպկու-
թյամբ սլկվում եր առաջ մարդկանց արանքով։ Յես
հազիվ եյի կարողանում քիթ ու պոռանդս ազատ պահել
ողի մեջ անիմաստ շարժվող ձեռների ու արմունկների
պատահական հարվածներից։

Մենք անցանք յերկու շաբեք կեղտոտ ու մերկ ուն-
յակների միջով, վորոնց շուրջը նոտած ելին նավասահ-
ներ և յերկաթուղու ծառայողներ։ Մի՛ քիթն ուռած,
ներ ալկվում եր առաջ մարդկանց արանքով։ Յես
նելով, գոչեց։

— Եյ, բասուրման, արի միասին «տրեպակար» պա-
րենք։

Յես հաղիվ կարողացա ազատվել նրա սիրավիր
թերերից, վոր բացիկ ելին ինձ գրկելու համար։ Զառւ-
շնեկոն, գլուխը փելիսովիայորեն շարժելով, արտաս-
նեց։

— Թոչում, ո՞ւր և քո փետուրը։

Քեռի Սիդորի կատունք պոկոտել ե , — ասաց Իցկոն ,
Ճիծաղելով : ▾

— Քեռի Սիդորը «Արքայական յախտայի» տերն
եր , կատուն՝ ողին :

Վերջապես , հասանք ընդարձակ տանդոկի համե-
մատաբար մի առահօվ անկյուն , ուր մեր կողերը
ջարդվելու վտանգից ազատվեցին : Այստեղ մի յեր-
կայն սեղանի քով նստած եյին տասնի չափ նախատի-
ներ : Սեղանը ծածկված եր կեղտոտ ամաներով , հա-
ցի կտորներով , ուտելիքների ու ծխախոտի մնացորդ-
նրով , դարեջը և ողու շիշերով ու բաժակներով :

— Ահա ե' ձեր արտիստը , — ասաց Իցկոն , ցուց
առաջ սեղանի ծայրը :

Այստեղ նստած եր Լեռնը : Նա կիթառ եր նվազում
և զվարճացնում սեղանակիցներին : Զնայելով յուր չքա-
վորությանը , յես մինչեւ այդ որը նրան կեղտոտ չեյի
տեսել : Գոնե շապիկը միշտ անարատ եր , ձեռներն ու
յերեսը մաքուր , կոշիկները վաքսած , փայլուն : Իսկ
այժմ նա նմանվում եր գործարանական բանվորի :

Իմ յերեալը նրան զարմացրեց : Նա չընդհատեց
նվազումը , բայց չափազանց չփոխվեց , կարմրեց : Նա-
վաստիները նրան լսում եյին ուշադիր , թեև արդեն
բոլորն ել հարբած եյին : Իրանց հիացմունքն արտահայ-
տում եյին գոռում-գոչյուններով : Յերեմն մեկը կամ
մյուսը վեր եր կենում , գրկվում ու համբուրվում նրա
հետ կամ , մեջքին զարկելով , արտասանում եր .

— Մալադե'ց , լեվա , մալադե'ց ...

Զառւշենկոն մեզ հրավիրեց նստել մի դատարկ սե-
ղանի քով , առելով թե Լեռնին չի կարելի իսանգարել ,

նավաստիները կլատաղեն : Մի չիշ դարեջը պատրվա-
կով կարելի յեր նստել , և մենք նստեցինք : Լեռնը շա-
րունակ մեզ եր նայում ու ժպտում : Այդ տասն որիմա-
ցնթացքում նա ավելի նիհարել եր ու թորշոմել : Առա-
ջին անգամ այդ որը նրա բերանի անկյուններում նկա-
տեցի թեթև խորշեր :

Սեղանի մոտից վերկացակ լայն թիկունքով ու մեծ
միքուքով մի նստականի և որորվելով մոտեցավ Լեռնին :
Զեռը դնելով պատանու նիհարիկ ուսի վրա , գոչեց .

— Եյ , ճպուռ , նվազելու յես ինձ համար՝ «Ոհ , իմ
վիշտ» թե՞ չե . յես ուղում եմ՝ «Ոհ իմ վիշտ» լսել :

— Տե՛ղի նստիր , եյ , Սիրիբի ուսիւ , — գոչեցին ըն-
կերները , — մի՛ նանդարիր Լեռային :

— Զեմ նստիլ , մինչեւ վոր չլսեմ «Ոհ , իմ վիշտ» ,
«Ոհ , իմ վիշտ» : Լեվա , լեվա , «Ոհ , իմ վիշտ» :

— Հիմարի գլուխ , — նկատեց մեկը , — լեվան
հենց «Ոհ , իմ վիշտ» և նվազում : Զե՞ս լսում , անո՞ւ... .

— Լեվա , սուս չի՞ ասում :

Լեան գլխով հաստատեց , թե նվազածը հենց «Ոհ ,
իմ վիշտն» ե :

— Սատանան տանի , — գոռաց Սիրիբի ուսիւ ,
ինչ լավ եյիր նվազում : Լսեցինք , լսեցինք . Հիմա-
նվադիր «Դունայի գեղեցկուհի» : Լեվա , լեվա , «Դու-
նայի գեղեցկուհի» :

— Եյ քեզ «Դունայի գեղեցկուհի» , — ասաց մի
հաղթանակամ և , յետեկց ձեռները ոցելով Սիրիբի ուսիւ
կոների միջով , փորս գեմ ալից մեջքին , բարձրացրեց
ու բերեց նստեցրեց յուր տեղը :

— Ե՛յ դու կալուգայի արջ, ինչպես համարձակվեցիր, — գոռաց Սիրիրի ուեխը, — թաթերդ կփշրեմ...

Յել բառնցքն այնուիսի ուժով զարկեց սեղանին, վոր ժեկերն ու բաժակները միմյանց դիպչելով փշրվեցին:

Բարձրացավ աղմուկ, վեճ, իրարանցում: Ողի մեջ յերեացին մի քանի սպառնալի բոռոնցքներ: Գործե «Սիրիրի ուեխը» և «Կալուգայի արջը» միմյանց քիթ ու պրունգը ջարդեցին, յեթե չլիներ մի ալեռոր նավաստի, վորին ընկերները «Դյաղուշկա» եյին անվանում: Նա մեջ մտավ նրանց բաժանելու: Ողնության հասավ լեվոնը: Նա նվազումը ընդհատեց և, տեղից վերկենալով՝ առաց:

— Պարոններ, թույլ տվեք ինձ գնալ «Խերսոնցիների» մոտ:

Վեճն խկույն դադարեց: բոլորը ըրջապատեցին յերաժտին:

— Լեվա, աղավնյակ, մի՛ անիր, լեվա, հոգյակ, նվազիր: ի՞նչպես կարելի յե, — ինդքեցին բոլորը:

— Նվազի՛ր... ի՞նչպես նվազեմ, պարոններ, քանի վոր չեք լսում, կովում եք անկիրթ «բոսյակների» պես: Մի՛թե լայել և «Ռուսաց ընկերության» նավատիներին:

— Վայել չե, ի հարկե, վայել չե, դոչեց «Դյաղուշկան»:

— Դուք ինձ «Տիրասպոլիների» մոտեց բերեցիք այսեղ, վոր ձեր կոփելը տեսնեմ: Դուք լավ չեք դժահատում յերաժտությունը:

«Խերսոն», «Տիրասպոլ» նավեր եյին, և նավաստիները կրում եյին իրանց նավերի անունները:

— Կդեահատենք, կդեահատենք, լեվա, հիմարներ չենք...

— Ինչ ե, փո՞ղ ե ուզում այդ ճպուռը, — դոչեց Սիրիրի ուեխը և վարտիկի դրապանից հանելով արծաթե գրամներով լի քսակը, դցեց լեռնի դիրկը, — ահա՛ վերցրու, խեղպի՛ր...

— Մենք ել կտանք, մենք ել կտանք, — աղաղակեցին ամենքը, ձեռները տանելով իրանց գրապանները:

— Տեսե՛ք, տեսե՛ք, լեռնը հարստանալու յե, դոչեց իցկոն, հրճվանքից ձեռները միմյանց զարկելով, յերբ տեսավ փողի քսակները:

— Հապա, կահսնենք թե ինչպես, — արտասանեց Զառւշնկոն, վոր, արմունկները սեղանին հենած, դեռում եր կատարիող տեսարանը:

Լեռնը հանդիսաւ վերցրեց յուր գիրկն ընկած քսակները և, զնելով սեղանի վրա, ասաց:

— Յես իմ գնից մի կոռակ ալելի չեմ վերցնիլ: Համարը 10 կոռակ, զո՞չ ավելի, զո՞չ պակաս: Դրեք ձեր գրապանները, նստեցե՛ք, նվազում եմ...

— Բրակո՛, լեռն, բրակո՛, զու մեր յերեսը սեշարիք, — դոչեց Զառւշնկոն վոգեորդած և նավատիների ուշադրությունը դրավեց մեր վրա:

— Այդ ի՞նչ կատու յե, — դոչեց Սիրիրի ուեխը, — ա՛հ, տիրացո՞ւ: Ձե՛, ուխտավոր ե, արեղա յե... Ե՛յ, յերեկ իոքագամայի տաճարի համար լուսա ժողովելու յես յեկել: Արի՛, արի՛, մենք ել կտանք մեր հոգու փըրկության համար:

Զառւշնկոն վերցրեց սեղանի վրայից յուր գըր-

քույկները և համբիսավոր քայլերով մոտեցավ նավասահիներին:

— Պարոննե՛ր, յես վլ՛չ տիրացու յեմ, վլ՛չ տաճարի համար լումա ժողովող: Յես յերդիչ եմ...

— Յերդիչ, յերդիչ, այդ շատ լավ ե, — ասացին վոմանք, — դեհ, յերդիր, տեսնենք:

Յերդի՛ր՝ «Ո՛չ, իմ վիշտ», — պահանջեց Սիրիրի ռեխը, — «Ո՛չ, իմ վիշտ»:

— Ո՛չ, խավար, ահա իմ վիշտը, — արտասանեց բանաստեղը: — Պարոններ, յես ձայնով չեմ յերդում, այլ գրչով: Գնեցե՛ք մի-մի որինակ ահա այս գրքույկներից: Դուք, պարոններ, ինչպես տեսնում եմ, յերաժշտությունը սիրում եք. մի մոռանաք, վոր բանաստեղծությունն ել նրա քույրն ե:

— Քո՞ւյրն ե, — ասաց Սիրիրի ռեխը, — ապա ռո՛ւր ինձ այդ գեղեցկուհուն...

Նա խեց գրքույկներից մեկը, դրեց դատարկ ամանի մեջ, վրան ողի թափեց և. լուցկին վառելով, ասաց.

— Ապա, տեսնենք քույրն ինչպես ե յերդում: Ողին այնքան թունդ չեր, վոր վառվեր:

— Քեզի՛ Սիրոր, — գոչեց Սիրիրի ռեխը, — կատվիդ մագիները հանել են... Խի-խի-խի, սպիրտ բեր...

— Ե՛յ, Սիրիրի ռեխ, — ասաց «Դյաղուշկան», — այսոր դու մեղ ուզում ես խայտառակել: Գրքերը սուրբ են, հանցանք և նրանց այրելը... Գնե՛նք մի-մի որինակը...

Նավաստիները գնեցին մի-մի որինակ «Վշտի և տանջանքների ժամերից», իոկ անհանդիստ Սիրիրի ռե-

խը մի մեծ բաժակ ողի ձեռքում մոտեցավ հնդինակին: — Ինսծի՛ր, դնչիցդ յերեւում ե, վոր սիրում ես... Զառւշնկոն խմող չեր: Յերկու ձեռները դեմ արվեց բաժակին, գոչելով.

— Հեռու ինձանից համառուսական թույն... Այն ժամանակ Սիրիրի ռեխը կապակ կառնին:

— Խմի՛ր, դու մինչև այսոր դեռ չես հաղորդվել... Թե քըստոնյա յես, պիտի խմես...

— Լեվա, Լեվա, մի բաժակ մեր խաթրու, խընդրեցին մյուսները:

Լեռնը հրաժարվեց, ասելով, թե խմելուց հետո չէ կարող նվազել: «Դյաղուշկան» նրան պաշտպանեց:

Որն արդեն մթնել եր: «Դյաղուշկան» հայտնեց, թե շողենավ վերապառնալու ժամանակ ե: Խումբը վճարելով կերած-խմածի գինը, նաև Լեռնի վարձը, դուրս յեկալ աղմուկով, գոռում-դոչուններով, միմյանց բոթելով ու հարվածելով:

Փողոցում Զառւշնկոյի վլուխը պտտեց այնպես, վոր անշուշտ կընկներ, յեթե չինվեր պատին: Խմիչքների հոտն և ծխախոտի ծուխը շշմեցրել եյին նրան: Բայց նա կընկում եր.

— Շատ ուրախ եմ այստեղ գալուս, շատ ուրախ եմ, ամեն որ պիտի դամ: Վորքա՞ն նյութ, վորքա՞ն նյութ գրողի համար:

Իցկոն վոստոտում եր Լեռնի շուրջը: Վերջապես, ձեռքը գցելով նրա թեկին, հարցրեց.

— Այսոր ինձ համար շոկոլադով ես առնելու, թե ծխախո՞տ:

— Յերկուսն ել:

— Ֆիա՛մ, Փիա՛մ, ուրեմն այսոր յերկու ուռւբլուց
ավելի յես հավաքել... կեցե՛ տրիո: Յես այսոր վո-
չինչ չեմ վաստակել: Բանաստեղծ, պիտի ինձ համար
սրինդ գնես: Յես ել ուզում եմ սրինդ նվազել:

— Կնեմ, ինչու չեմ գնիլ, — ասաց Զառւշենկոն
բարեսրտաբար:

Զիմբա-չիմբա-չիլալա, Զառւշենկո, չիլալա'...

Յերբ ընկերները բաժանմեցին, յես հետաքրքրվե-
ցի խմանալ՝ ինչու Լևոնը փոխել ե յուր արհատը: Զեյթ
ուզում հավատալ, վոր առանց վերին աստիճանի ստի-
պողական մի պատճառի կարող ե նա ցերեկներն ան-
դամ ապրել թատրոնից հետու:

— Կարիքն ե ստիպում, սինյոր, — պատասխանեց
նա հանդարտ:

— Բայց չե՞ վոր դու առաջ ել կարիք ունեցիր:

— Յես ուզում եմ մորս կամքը կատարել:

— Այսի՞նքն:

— Ուզում եմ նրան առաջավել:

Յես նայեցի նրա աչքերի միջին և հասկացա, վոր
կեղծում ե: Փողոցային լաստերի լույսը մատնեց նրա
այլայլիւը:

— Ե՛ս, շատ գովելի յե, — ասացի յես, — վոր ու-
զում ես մորդ ապահովել: Բայց ների՞ր, Լևոն, այս ան-
դամ շատ ել չեմ հավատում քեզ: Կարծում եմ, ուրիշ
նորատակ ունիս:

Նա վոշինչ չասաց, միայն քայլերն արագացրեց:

— Ո՞ւր ես շատապում, — հարցը յես:

— Թատրոն:

— Ե՞լի թատրոն:

— Այո՛, սինյոր... այսոր լավ դրամա յեն ներկա-
յացնում... .

Յեվ, յերկի, իմ հարց ու փորձերից աղասվելու
համար, շտապով հեռացավ: Յես արդեն գուշակել եյի
նրա միտքը...

Մի քանի անգամ այցելեցի «Արքայական յախ-
տուց»: Լևոնին այնտեղ սիրում եյին: Նալաստիները
խլում եյին նրան միմյանց ձեռքից: Նա գիտեր նվազել
մալառուսական յեղանակներ ու պարեր: Անցնում եր
մի խմբից մյուսը, բոլորին զվարձացնում, հավաքելով
յուր տասնական կոպեկները: Զվարճության տաք մի-
ջոցներին սեղանակիցներն յերբեմն ինդրում եյին նրան
խմել մի-մի բաժակ ողի կամ գարեջուր: Նա չեր ու-
զում խմել և չեր ել կարողանում խմել:

Մի անգամ իմ ներկայությամբ, յերբ զզվանքով
յետ դրեց ողու բաժակը, նրա համար պահանջեցին ինչ-
վոր քաղցր ըմպելիք: Նա մի բաժակ խմեց, հետո յերկ-
որդն և զվարթացավ...

Ցավալի յեր ինձ համար, վոր նա այցելում ե այդ
ստորին վայրերը: Բայց իրավունք չեյի համարում հա-
ժողել նրան թողնելու այդ տեղերը: Ուրիշ ի՞նչ միջոց
ուներ նա ապրելու, բացի նախկին վողորմելի պարագ-
մունքից:

Մի որ նա ասաց.

— Սինյոր, յերկու ամիս չկա, արդեն յերեսուն
սուրբի յեմ հետածգել: Բայց մորս չասեք:

— Ինչո՞ւ:

— Վորովհետեւ այդ փողերն ինձ հարկավոր են...

— Իսակիա գնալու համար, — լրացը յես նրա խռո-

քը, խնդիրը միամղամից պարզելու համար .—մի՛ զարմանար, կեսն, յես այդ վաղուց գիտեյի:

— Ո՞ո, սինյոր, իրավ ե, յես ուզում եմ տեսնել իտալիան...

— Յեվ Լուիզային...

Նա ամոթից յերեսը դարձրեց ինձանից: Յես հազորդեցի նրան, թե սինյորա Ստեֆանիան Կալվարութից նոր նամակ ե ստացել: Բարիտոնը դրում ե, թե յերդեցողության ուսուցիչները փորձել են յերդի ձայնը և հիացել նրա ուժով և «տեմբրով»: Մի հայտնի պրոֆեսոր խոստանում է յերեք տարիա ընթացքում Լուիզային այնչափ պատրաստել, վոր կարողանա ոպերաներում առաջին «դրամատիկ-սոպրանո»-յի գերը յերդել:

Հաղորդածս նորություն չեր նրա համար: Նա ասաց, թե նույն որն ինքը նամակ ե ստացել Լուիզայից: Բարի որիորդն յուր խոստումը կատարել եր: Սակայն այդ յեղավ առաջին և վերջին նամակը...

Ամբողջ զարունն և ամֆոք պատանին այցելեց նավահանգստի պանդոկները: Յերբեմն դալիս եր սենյակս և ինձ հաշիվ տալիս: Նրան դեռ սիրում են նավաստիները, հաճույքով լրում և միմյանց ձեռքից խլում: Ամսական միջին թվով քան ոուրիուց այլելի յի հետաձոռմ: Շուտով, չուտով կկատարի յուր փախազը, կուրեսը վիթի իտալիա...

Այն ինչ՝ պանդոկների մինուրան արդեն դրել եր յուր գրոշը նրա վրա: Զեերը նկատելի չափ գոեհկացել ելին: Ժամանակ առ ժամանակ արտասանում եր տղեղ բառեր, վոր առաջ չկային նրա բառարանում:

Արտասանում եր և խօկույն զղջում, կարմրում: Մի քանի անգամ զգացի, վոր բերանից խմիչքների հոտ ե գտվու: Իսկ մի յերեկո մեր տան զարպասի առջև տեսանրան սաստիկ հարբած դրության մեջ: Կիթառը կռնատակին բռնած, որորվելով, առւն եր գնում, մի քայլ առաջ դնելով, մի քայլ կողք, որորվելով: Ոգնեցի նրան սանդուղով բարձրանալու:

Ալմաստը տեսավ նրան թե չ՝ ձեռները զարկեց յուր յերեսին, գոչելով.

— Սպանեց, մորթեց...

Նախատինքի ժամանակ չեր: Խնդրեցի վշտացած ժորը զսպել առ այժմ յուր սրտի թույնը:

Լեռնը թավալից յերեսնիվայր անկողնում, մի վոտը թողնելով հասակի վրա: Տեսարանը յեղկելի յեր: Լեռնը, այն պատանին, վորին յերեսակացությունս զբեթե հերեւտակացրել եր, ընկնում եր աշխումս: Յեվ այս ինձ համար դառն եր, շատ դառն: Նա վոչինչ չեր զդում, ընկած եր կեղտոտ լաթի պես, վոտից մինչեւ զլուխ ցեխոտ: Միայն յերեմն ձեռը դուրս եր բերում փորի տակից և շոշափում ձախ կոչիկը...

Յես թողեցի տիսուր տեսարանն և հեռացա: Մի՞թե այս և բարեկամիս վերջը: Մի՞թե Ալմաստի չար գուշակությունն իրադործվում ե:

Առավտոյան յերբ բարձրացա վերև, Ալմաստն արդեն թեթևացրել եր յուր սիրտն և աչք-ունքը կիտած լուռ նստած եր մի անկյունում: Լեռնը վնասում եր կիթառը, վոր դնա յուր գործին, չեր դտնում: Ալմաստը թաղցրել եր, չեր ուզում տալ: Տեսնելով ինձ, խեղճ կինը լաց յեղավ: Այս անգամ խոսքեր չդժա լեռնին արդարացնելու:

— Զեյթ ասում, վոր վերջն յուր անիծված հոր որին և համառում: Ահա՝ չորրորդ անգամն և տուն դալիս շահ որում...

Յես բարգլոք համարեցի Լեռնի հետ խռովել առանձին, հրավիրելով սենյակո: Հիշում եր յերեկիվա յուր խայտառակ դրությունն և սաստիկ ամաչում: Լուռ եր, սպասում եր, վոր յես խռում: Ի՞նչ պիտի ասեցի. նախառելը կլիներ ավելորդ. Լեռնը հիմար գլուխ չեր և զոշ ել յերեխա. չուտով պիտի լրանար տասնութ տարին: Յես ընկերաբար բացատրեցի հարբեցողության կորստարեր հետևանքները: Նա լսեց մինչև վերջը համբերությամբ և, յեր վերջացրի, ասաց.

— Այդ բոլորը գիտեմ. հայրս հենց հարբեցողությունից մեռավ:

— Դիմես և ելի խմո՞ւմ ես:

— Ստիպում են:

— Ովքե՞ր:

— Նավաստինները:

— Տեղափոխվի՞ր ուրիշ պանդոկ:

— Ամեն տեղ ստիպում են:

— Մի՞թե չես կարող մերժել:

— Առաջ մերժում ենի, հիմա չեն թողնում:

— Ի՞նչ ասել և չեն թողնում. ամեն մարդ յուր կամքի տերն ե:

— Այո՛, սինյոր, բայց յերբ կես փթանոց բուռնցքը պահում են քթիդ տակ, մոռանում ես կամքդ:

— Խօմ նրանք քեզ չեն ծեծում:

— Կծեծեն, յեթե շատ համառություն անեմ:

— Բայց ի՞նչ ոգուտ ունին քեզ հարբեցնելուց:

— Հարրածներն ատում են արթուն մարդուն: Յերբ չեմ խմում, ասում են՝ «ղու մտքումդ ծաղրում ես մեզ: Դու յել խմիր, հավասարվիր մեզ հետ»:

— Գոնե քի'չ խմիր:

— Շատ չեմ խմում, բայց քիչն ել ինձ հարբեցանում ե:

— Ի՞նչ են խմեցնում:

— Առաջ քաղցր խմիչքներ եյին տալիս: Հիմա ասում են՝ «թանդ և նստում» և ստիպում են իմել գառ րեջուր ել, ողի յել...

Յես լսեցի, բայց հարկավոր եր մի հետեւանքի հասցնել մեր խոսակցությունը:

— Լեռն, թո՞ղ այդ պանդոկները, ելի թատրոններով զբաղվիր...

— Իհարկե, թողնելու յեմ, սինյոր, շուտով, շուտով կզնամ իտալիա... Արդեն հարյուր հիսուն ոռութիւննիմ:

— Իսկ մա՞րդյոդ:

— Նրան ել հետո տանելու յեմ:

— Հարյուր հիտուն ոռութիւն՞վ:

— Ի՞նչ կա, քի'չ ե: Յես շատերից եմ հարցրել: Ասում են ամսական յերեսուն ոռութով կարող եք տպել այնպես, ինչպես այստեղ:

— Գուցե կարելի յե, բայց մի քանի ամիս, իսկ հետո:

— Հետո՞... մի գործ կզանիմ:

— Լեռն, ճշմարի՛տն ասա, ի՞նչն և քեզ ստիպում իտալիա գնալ, հարցրի յես, նայելով ուղիղ նրա աչքերի մէջին:

Միբանգադե. Արտիստ—3

— Աւղում ես՝ վլունչել նվագելլ սովորել ու գալ այստեղի որկեստրը մտնել:

— «Կեղծում ես, բարեկամս, —մտածեցի յես, — այդ չե գլխալոր պատճառը» :

Նայեցի նրան ուշագիր, սիրսս մորմոքից : Նա վուգի վրա ցամաքել եր, ինչպես արմատից վնասված ծաղիկ: Խնդրեց ինձ համողել մորը, վոր կիթառը տա իրան: Միւնույն ե, յեթե չտա, պիտի նորը գնել. ինչու ավելորդ ծախսի մեջ ընկնել:

Հաղիկ այդ որից անցել եր մի շաբաթ, յերբ մի յերեկո, տասը ժամին, հանկարծ սենյակս մտավ Ալմատը՝ շփոթված:

— Պարոն, նեղություն քաշեցեք, վերև բարձրացեք աստծո սիրույն:

Տարորինակ դրության մեջ աեսա յես Լելոնին այդ յերեկո: Հեղ պատաճին կատարելապես կատաղել եր: Առանց բաժկոնի ու կոչիկների թավալիք եր դրների առջել և մռնչում եր ինչպես մատաղ գաղան, կրծոտելով յուր ձեռների միսը: Նրա նիհար պարանոցի յերակներն ուռել, փքվել եյին, կարծես ահա, ահա պիտի տրաշվեն ձղված լարերի պես: Նա վոտները զարկում եր հատակին ինչպես դիվահար.

Պատահել եր մի շատ սովորական դեպք, վորի նըմանները պատահում եյին Ողեսայի խուլ անկյուններում գրեթե ամեն յերեկո: Նավահանգստից վերադառնալիս Լեռնի վրա հարձակվել եյին ինչ-մոր քաղցած սրիկաներ, խել ձեռքից կիթառը, հանել բաճկոնն ու կոչիկները և բաց թողել:

— Յեվ դրա համար քեզ սպանո՞ւմ ես, — գոչեցի յեւ քռնելով Լեռնի թեւ, — ամո՞թ:

— Յես ել այդ եմ ասում, վորդի, խոմ չեմ նախատում: Տանը մի հատ պիջակ ել ունիս, կոշիկներ ել... վայ, տեր աստված, ինչպես ե գլուխը պատին խփում: Այս ի՞նչ պատիժ ե, յերկնային թագավոր...

Կասկածելի յեր, վոր Լեռնը կիթառի, մանավանդ վորորմելի պիջակի ու կիշիկների համար այդպիսի հեծ ու կոծ բարձրացներ: Անշուշտ կորուստն ավելի մեծ եր: Խնդրեցի Ալմաստին մի քանի ըստե թողնել մեզ առանձին: Այրին դուրս գնաց: Ճանաչելով Լեռնի բնավորությունը, գիտեյի ինչպես պիտի խոսել այսպիսի հանգամանքներում նրա հետ: Նա սրում եր զգալ վոր մարդիկ իրան չափահան են համարում:

— Ամոթ ե, Լելոն: Փառք աստծու, դու յերեխա չես, խելքի՛ յեկ... Զարժե այդպես դոռալ...

— Զարժե՞, չարժե՞, սինյոր, դուք ե՞լ եք ասում: Բայց չգիտեք ինչ եմ կորցրել, ի՞նչ: Զախ կոշիկս... այո՞... ձախը... Գիտե՞ք... Դուալիս, վիորնչել, յերգ, յերաժշաություն, կորավ ամեն ինչ... բուլվարի ներքեց վումն եր, այն մեծ սանդուղի մոտ: Յերկու հոգի եյին մեկը բարձրահասակ, մյուսը թիկնավետ: Բարձրահասակը բոնեց յետեկց ձեռներս, մյուսը խուզարկեց գըշ պաններս: Յերբ մի ոուրլուց ավելի չգտան՝ բարկացան: Կարծում եյի կիթառս կիւլեն կչեռանան: Զեղա՞վ: Պիջակը ել հանցին... Տերը նրանց հետ, թող շապիկս ել հանեյին՝ չեյի խոսիլ... Բայց կոշիկներս, ձախ կոշի՛կ, ՀՀանի՞ր, — ասաց ձեռներս բռնողը, — գոնե յերկու բառկ ողի արժեն: Յերբ թիկնավետը կռացավ կոշիկներս

Հանելու, կատաղեցի, սկսեցի կծոռել նրա աւսերը՝ դլուխը... Նա ինձ ապտակեց: Աչքերս մթնեցին... Սկսեցի աղաչել, պաղատել... Զլսեցին անաստվածները... Տարան, տարան...

— Ուրեմն կոշիկներիդ համար ես լալիս, — ասացի յես՝ մոտավորապես հասկանալով բանի եյությունը...

— Հարյուր հիսուն ոուրի, սինյոր, հարյուր հիսուն ոուրի կար կոշիկներիս մեջ, ձախ կոշիկիս... Այստեղ եյի պահում հավաքած փողերս...

Յեվ նա սկսեց դառնագին հեկեկալ...

Այդպես, ուրեմն, տարել եյին նրա վեց-յոթ ամսվա աշխատանքի վարձը, նրա իտալիա գնալու, Լուիզային տեսնելու հույսը... Նա ավելի ապահով տեղ չեր գտել յուր փողերի համար: Տանը պահել վախեցել եր: Մայրը կդառներ, չեր վերադարձնիլ: Այդ կինն ամեն առավոտ վորդու գրապանները խուզարկում եր, մոտը փող չեր թողնում:

— Փաթաթել եյի թղթում, դրել կրունկիս կողմում, վրեն կաշի խփել, ծայրեցը դամել... Շատ դիշերներ կոշիկներով եմ քնել... Տարան սրիկանները: Ով դիտե, հիմա ծախում են մի բաժակ ողով կամ մի ֆունա հացով... Տե՛ր աստված, տե՛ր աստված, ի՞նչ պիտի անեմ...

Ես խոսք չեյի դանում թշվառին միիթարելու. Խստություն համարեցի նախատել նրան յուր անդուռության համար: Հարկավոր եր միայն ցույց տալ կորուսը գտնելու դեմք մի թույլ հույս: Արդեն վիշտը շատ մեծ եր:

— Ա՛ա, — զուչեց նա հանկարծ, ձեռը զարկելով ճակատին, — հույս կա, կա հույս գտնելու:

— Այո՛, — ուրախացա յես յերեխայի պես:

— Այո՛, սինյոր: Դուք ճանաչո՞ւմ եք իցկոյի հորը: «Մոշկա սելողիկա» են կոչում նրան: Ճարպիկ մարդ ե, ճանաչում ե փողոցի սրիկաններին: Հին հագուստեղեն ու կոշիկներ ե գնում, վաճառում: Ա՛հ, իսկույն կղնամ նրա մոտ. իսկույն: Մամա, մամա, ներս յեկ, տուր ինձ մյուս կոշիկս, պիջակս, գնում եմ կիթառս փնտռելու...

Հակառակ մոր կամքին, նա չուտով հազնվեց ու վագեց դուրս:

Յես, իհարկե, Ալմաստին չհայտնեցի, թե Լևոնն ինչ է կորցրել: Յերեակայում եյի ինչ վողբ պիտի բարձրացներ և վորքան անիծեր վորդուն:

Վերադարձա սենյակս, հոգով նախանձելով հայուստներին: Ինչո՞ւ յես ել հարուստ չեյի...

Լույսը նոր բացված գնացի Լևոնին տեսնելու: Արդեն դուրս եր յեկել տնից: Ալմաստի ասելով, չեր քնել, պտտել եր անկյունից անկյուն: Ուշ յերեկո յեր, յերբ Լևոնը մտավ սենյակս հոգնած, քրտնած, փոշոտ: Նա խոսելու անդամ ուժ չուներ: Մինչև կեսօր թափառել եր իցկոյի հոր, իսկ կեսօրից հետո՝ Զառւշենկոյի ու իցկոյի հոր հետ: Յեղել եյին գրեթե բոլոր այն չուկաներում, ուր հին հագուստեղենի առուտուր ե կատարվում: Փնտռել եյին միայն կոշիկները առանց ում ե ասելու ինչ դանձ են վնասում: Յեվ զո՞ւր: Իցկոյի հայրը խորհուրդ եր տվել Լևոնին՝ «մոռանալ, թե յերբ և փող ե ունեցել»: Զառւշենկոն հայտնել եր վոստիկա-

նությանը։ Պրիստարվը հածդրել եր. վո՞ր հիմարն եկոչիկի մեջ փող պահում։

Լևոնն ամբողջ որն անց եր կացրել անոթի։ Առաջարկեցի ընթրել ինձ հետ, մերժեց, դուրս յեկավ ուժասպառ, հուսահատված, հարբածի պես որորվելով։

Մյուս որը յես նրան հանդիպեցի մի փոքրահար, նիհար, կեղտոտ հրեայի հետ խոսելիս։ Դա ինքը «Մոշկա սելլոդկան» եր, Իցկոյի հայրը։

— Մոսյո, դարձավ նա ինձ, յերբ իմացավ, վոր Լևոնի բարեկամն եմ, — միլուքս վկա, աղքատն յերբէք փող չպիտի ունենա։ Փողը շատ գոռող ե, սիրում ե թանկագին պալտաներ։ Հիմար աղքատը կարծում ե, թե կարելի յե նրան պահել դարշապարի տակ, կոչիկում, խի-խի-խի՛ . . . Մանուկ, զու պիտի կուրծքը պատռեյիր ու ասեյիր այդ հարյուրանոցին։ «պատվելի, սիրելի, համեցեք, ա՛յ քո բնակարանը»։ Յերանի յեմ տալիս այն հնավաճառին, վոր այդ կոչիկը կդնի։ Յերդվում եմ միրուքովս, Սողոմոն արքան ել այնպիսի թանկագին կոչիկներ չի հագել։

Մի շարաթ շարունակ Լևոնը վաղ առավոտից սկըսած մինչև ուշ յերեկո վինտուում եր յուր կորուստը։ Զառուշներն և Իցկոն հուսահատվել եյին, այլևս չեյին ոդս նում նրան, իսկ նա դեռ վինտուում եր։ Նա զրկվել եր քնից, հանդսությունից, ախորժակից։ Տուն եր վերադաշտությունից, պատում յերեկոները, պառկում հագստուով անկողնում, հեկեկում ու հեկեկում։ Ալմատը հուսահատությունից չդիմուր ինչ աներ, տանձվում եր վորդու հետ հանից չդիմուր ինչ աներ, տանձվում եր վորդու հետ հանից չդիմուր։ Նա պնդում եր, թե Լևոնը կիսելադրմի, յեթե վասար։

այդ դրության մեջ մնա։ Ամեն ինչ մոռացել ե, վոչընազով չի հետաքրքրվում, նույնիսկ թատրոններով։

Խոստովանում եմ, յես այլես քաջություն չունեյի Լևոնի վիշտը տեսնելու։ Նրա ծանր հառաջանքները, վողը, հեծկլտանքը կտրատում ելին սիրտս։ Այն ինչ այժմ նա ավելի հաճախ եր այցելում ինձ, քան առաջ։ Գալիս եր նստում սեղանիս քով և խոսում յուր կորստէ մասին։ Նա դեռ պահում եր իր սրտում մի թույլ հույս փողերը գտնելու։ Ով գետե, անկարելի վոչինչ չկա-կարող են այդ կոչիկները պատել ամբողջ քաղաքը և դարձյալ յետ գալ, իրանց տիրոջ ձեռքն ընկնել . . . Բայց շուտով այդ թույլ հույսն ել մեռավ նրա մեջ, և Լևոնի միտքը սկսեց փոքր առ փոքր սթափիվել։ Ծանոթ նավատարիները ինդրում եյին նրան շարունակել հաճախիկ պանդոկները, խոստանալով նրա համար նոր կիթառ դնել։ Յես խորհուրդ տվիցի նրան ընդունել այդ առա-ջարկությունը և նորից սկսել փող ժողովել։ Մի որ, վերջադես նա գնաց «Արքայական յախտա» մի նոր կիթառ ձեռին։ Յերեկոյան նա պատմեց ինձ, թե նա-վաստիները ինչպիսի ուրախությամբ են ընդունել նրան, ինչպես գրկվել ու համբուրվել նրա հետ։ Նրա բերանից դարձյալ ողու հոտ եր գալիս։ Յերեկի, այս անդամ խմել եր վիշտը մոռացության տալու համար։ յես քաջություն չունեցա նրան հանդիմանելու։

Մի չնչին դումար, վոր կարողացավ նա խնայել առաջին ամիսը, նորից վերակենդանացրեց նրա հույսը։ Այս անդամ նա անկեղծ խոստովանեց ինձ, վոր իտալիա գնարու գլխավոր նպատակը լուիզային տեսնելն ե։ Գրե-թե որ չեր անցնում, վոր նա չահրցներ։

— Սինյոր, ի՞նչ լուր կա Լուիզայից :

Նա ինքն ամաչում եր անմիջապես սինյորա Ստեփանիային դիմել այս հարցով : Յես հաղորդում եյի նրան բոլորը, ինչ լսում եյի տանտիրուհուցս : Միշտ Լուիզան բարե եր ուղարկում լւոնին : Զգիտեմ կա՞ր արդյոք, մի ուրիշը, վոր այնքան ուրախանար Լուիզայի ամեն մի հաջողության համար, վորքան այդ սիրահարը : Նա ասում եր, թե ամենից ավելի ինքն և սիրում Լուիզային և ամենից առաջ ել ինքն և ուզում ծափահարել նրան բեմի վրա . վոչ այստեղ՝ Ողեսայում, այլ այնտեղ՝ հտալիայում :

Մի անգամ նա ասաց .

— Յեթե մինչեւ առաջիկա դարուն չկարողանամ ճանապարհ ընկել, կիսելադարձեմ :

Մի ուրիշ անգամ դիմեց ինձ այս հարցով .

— Ի՞նչ եք կարծում, սինյոր, Լուիզան, նշանավոր յերգչուհի դառնալով, կդոռողանա՞ :

Հասկացա, թե իսկապես ինչ ե ուզում իմանալ : Հոգու խորքում նա ինքն իրան արժանի չեր համարում Լուիզային, բայց հպարտությունը չեր թույլ տալիս նրան խոստովանել արդ : Նա ուզում եր իմ միտքն իմանալ՝ արժանի յեմ համարում իրան թե՛ վոչ :

Կամենալով գեթ մի փոքր սթափեցնել այդ՝ որից որ ավելի ու ավելի կուրացող հոգին, պատասխանեցի .

— Այո՛, կդոռողանա : Նա հենց այժմ ել, յերբ դժողատ հեռու յե նշանավոր յերգչուհի համարվելու պատվից, գոռողացել ե ...

— Ո՞վ ասաց, —զոչեց լւոնը վշտացած : Նրա վարմունքը : Նա քեզ մոռացել ե :

Ի՞նչ : Ինչո՞ւ նա միշտ բարեներ և ուղարկում, խոմ ինքներդ եք ասում :

— Այո՛, բարեկամս, ուղարկում ե, բայց, ների՛ր, այդ բարեների նպատակն յես ուրիշ կերպ եմ հասկանում : Լուիզան դեռ յերգչուհի չդարձած, արտիստների խորմանկություն ե յուղացնում : Յես ճանաչում եմ նույնիսկ տաղանդավոր յերգչուհիներ և գերասանուհիներ, վորոնք չողոքորթում են համալսարանական քաղաքներում ուսանողներին, դավառական քաղաքներում՝ գիմնազիստներին միմիայն նրանց ցույցերին արժանանալու համար : Իսկ դուք յամբով ավելի գեղեցիկ ցույցեր անել : Լուիզան այս գիտե և քեզ հետ հեռագործ բարեկամություն և պահպանում յուր ապագայի համար, թեև գիտե, միենույն ժամանակ, վոր դու կաշառվող չես : Ա՛յս բարեկամս, մի հափշտակվիր այն ուսանողի պես, հիշո՞ւմ ես, վոր անցյալ տարի ինքնառապանություն գործեց մի յերգչուհու պատճառով : Լուիզան քեզ չի սիրում, յեթե սիրեր՝ նամակ կդրեր : Ինչո՞ւ մեկը զրեց ու լոեց :

Գուցե յես զրպարտում եյի Լուիզային, բայց ասածիս մեջ զդում եյի ճշմարտության մաս : Լւոնին փրկելու համար պատրաստ եյի ավելի վաստ գույներով պատկերացնել Լուիզային նրա առջեւ :

— Նա ժամանակ չունի ինձ նամակ դրելու, զբաղված ե, —ասաց լւոնը վոչ այնքան Լուիզային արդարացներու, վորքան յուր անձնասիրությունը պաշտպանելու մտքով :

— Գուցե... թո՛ղ այդպես լինի... առացի յես անորոշ յեղանակով՝ լւոնին ավելի չվշտացնելու համար :

Վորքան հիշում եմ, հենց այդ որն եր, վոր սինյորան Ստեփանիան մտավ սենյակս անսովոր ուրախ տրամադրության մեջ և ասաց.

— Սինյոր, հիմա կարող եք ինձ չնորհավորել:
— Ի՞նչ է պատահել...

— Պատահել ե այն, ինչ վոր վաղուց սպասում ելի անհամբեր: Լուիզան յերեկ պսակվել ե կավալլարոյի հետ... Հենց այս բողեյին հեռագիր ստացա... ահա...
Յել նա ծոցից հանելով հեռագիրը, ցույց տվեց ինձ:

— Այդպես անսպասելի՝ դոչեցի յես, թեև վաղուց մի ներքին ձայն ինձ ասում եր, թե կա ինչ-վոր մտրեմություն Լուիզայի և կավալլարոյի միջև:

— Անսպասելի չեր, սինյոր, վոչ, այդ դուք չէի-տելիք, իսկ յես դիտեյի, վոր նրանք նշանված են վաղուց: Նշանվելն ինձ համար կարեոր չեր, պսակվելն է կարեոր: Յես լուսաւ եյի, վախենարով, վոր գործը չիշանա: Ախ, վերջապես վորքան ուրախ, վորքան ուրախ եմ: Կավալլարոն հենց իմ ուղած փեսան ե՝ բարի, քաղաքավարի, լավ յերգիչ, լավ ել փող ե ստանում: Այս՝ Լուիզան ավելի լավ ընտրություն անել չեր կարող: Յերեկ պսակվել են, այսոր պիտի ուղերժեն Պարիդ: Կավալլարոն պիտի մի տարի մնա այնտեղ: Լուիզան, իհարկե, նրա հետ կլինի...

Յես չնորհավորեցի յերջանիկ մորը. բայց մի ներքին ձայն շնչաց, թե շատ ել անկեղծ չեմ վարվում: Ի՞նչաես կընդունի այդ լուրը Լուիզա, վորին սիրում եմ ավելի, քան կավալլարոյին ու Լուիզային:

Այդ որն յես վերադարձա դրսից տուն ուշ գիշերին,

վորպեսզի չհանդիպեմ լեռնին: Սակայն հետևյալ որը նա յեկավ սենյակս յերեկոյան սովորական ժամից առաջ: Սինյորա Ստեփանիան ճաշի միջոցին ինձ ցույց եր տվել յերկրորդ հեռագիրը, վորով հայտնվում եր, թե նորապսակներն արդեն ուղևորվել են Պարիդ:

Տխուր, անմոռանալի յերեկո. առաջին անգամ կողապտվելուց հետո, լեռնի դեմքի վրա տեսա այդ յերեկո ուրախ ժամիտ: Նա իսկույն պատմեց յուր ուրախության պատճառը: Յերկու որ ե նրան կանչում են «Խերսոն» շոգենավը: Այնտեղ նա նվագում ե նավապետի և յուր ոգնականների համար: Այսոր ոգնականներից մեկը, տալով նրան յուր մանուլինան, առաջարկել եր նվագել: Լեռնը կատարել ե նրա ցանկությունը: Նավապետին առանձնապես գուր ե յեկել «Մադրիդի շրջմոլիկը»: Նա մի շատ բարի մարդ ե. իմանալով, վոր Լեվոնը ձգտում է գնալ իտալիա, այսոր խոստացավ ոգնել նրան: Յերկու որից հետո «Խերսոնը» գնում ե կրօնշտադ: Այնտեղից յետ ե գարու և ուղեվորվելու յե Միջերկրական ծովը, հետո Հեռավոր Արելելք: Ահա այդ ժամանակ նա կվերցնի լեռնին յուր մոր հետ և կտանի մինչեւ իտալիայի սահմանները...

— Ո՞ո. սինյո՛ր, սինյո՛ր, այնքան ուրախ եմ, վոր ուղում եմ թուշկոտել: Յես նավապետի պարտքի տակ չեմ մնալ: Կնվագեմ նրա համար ամբողջ ճանապարհին, գիշեր-ցիշեր կնվագեմ: Իտալիա, Իտալիա, անպատճառ պիտի տեսնեմ: Վորքա՞ն կդարձանա Լուիզան ու ի՞նչպես կուրախանա...

Ծանր եր ինձ համար այս անկեղծ խոսքերից հետո

Թագցնել իրողությունը Լևոնից, վոր այդ պահին մարմացած վողեսրություն եր:

— Լևոն, — ասացի, — չա՞տ ես փափազում տեսնել Լուիզային:

— Այո՛, ի հարկե:

— Ցեթե շտեսնես, չա՞տ կտխրես:

Բայց յես կտեսնեմ նրան, ոինյոր, կտեսնեմ Միշանում, — գոչեց Լևոնը հավատով լի, միենույն ժամանակ, մի տեսակ յերկուով նայելով յերեսիս, Լուիզան այժմ Միլանում չե:

— Ո՞վ ասաց:

— Սինյորա Ստեֆանիայի հեռագիրը,

— Բաս վո՞րտեղ ե:

— Պարիզում:

— Ո՞ւմ հետ...

— Կավալլարոյի...

— Կավալլարոյո, — գոչեց պատանին գրեթե շնչառու:

Ամուսնացել ե Լուիզայի հետ և յերեկ ուղեկորդել Պարիզ մի տարի ժամանակով, — ասացի յես միանգամբից՝ սրտիս ծանրությունից աղատվելու համար:

Լևոնը ցնցվեց. յերեսի մկանունքները դողացին: Մի վայրկանում կարմրեց, կապտեց, հետո սպրդնեց կտալի պես:

— Տեսա՞ր, վոր քեզ չի սիրում Լուիզան, վոր գույներդի մեջ նո...

Լևոնը ճիգն արավ դսպել հուզմունքը: Այդ տասնութարեկան պատանին, վորի զդացումներն այնքան անժամանակ հասունացել ելին, ուներ և կամքի ուժ: Սա-

կայն հարվածն ավելի զորեղ եր: Նա թուլացած ընկըզմվեց աթոռի վրա, արտասանելով.

— Ա՛յ նորություն... պետք ե չնորհավորել...

— Այո՛, պետք ե չնորհավորել, — կրկնեցի յես, ձեզանալով իբր թե չեմ նկատում նրա հուզմունքը:

— Կավալլարոն լավ մարդ ե, աղնիվ ե, ասաց նա դողդոջուն ձայնով, շրթունքները կրծոտելով:

— Այնքան աղնիվ, վոր Լուիզան չարժե նրան:

— Սինյոր...

— Չարժե, չարժե, — կրկնեցի յես, վրդովվելով անմեղ խտալուհու ղեմ:

— Լուիզան բարձր ե... Լուիզան.. հրեշտակ ե...

Այս նա չկարողացավ իրան պահել, գլուխը դրեց ուղանին ու սկսեց հեկեկալ այնպիս ուժգին, վոր թվում եր, թե նրա մարմինը կտոր-կտոր ե լինում:

Յես դդացի անզուսպ ատելություն դեպի Լուիզան, կարծես, նա ինձ հասցրել եր բարոյական ծանր վիրավորանք: Սկսեցի անխնա և միանդամայն անտրդար պահարակել մի եյակի, վոր իսկապես արժանի յեր սիրո և հարզանքի: Նկարագրեցի նրա աննշան թերությունները խոշորացույցով մեծացրած, հնարեցի չեղած թերություններ: Լսելով ինձ, կարելի յեր կարծել, թե չկա աշխարհի յերեսին և չի յեկել ավելի անբարտավան, ավելի հիմար և նույնիսկ ամելի տքեղ ու հակակրելի աղջիկ, քան Լուիզան: Յեվ այս բոլորը Լևոնին հիանթավիճաններու համար: Յես ջախջախում եյլ նրա կուռքը, ձգում նրա վոտների տակ, վորպեսզի վոչնչացնեմ նրա սրտում խորին հավատը: Այն ինչ՝ գիտեյի, վոր այդ կուռքը վոչնչով մեղավոր չե յուր մոլեռանդ յերկրպատ-

գուի առջեւ։ Նա գուցե չեր ել յերեակայել, վոր յուր պարզ ընկերական վարժունքը կարող ե մի պատանու սրտում առաջացնել այդքան հասուն, այդքան խորը և չերմ զգացում...

Սակայն լեռնն ավելի մեծահոգի և վեհանձն եր, քան կարող ելի յերեակայել։ Նրա կեղեքված կրծքից դառն հեծկտանքի հետ դուրս ելին դալիս միայն այս բառերը.

«Լուիզան պակասություն չունի... Լուիզան հրեշտակ է»...

Յեղել են մոլեռանդներ, վորոնք կրակի միջից իրանց այրվող ձեռները պարզել են դեպի վեր, աղոթել աստըծուն, վորի անունով նրանք դատապարտվել են այրման։ Այսպես եր և՛ լեռնը։ Անհուն տանջանքների բովին նա դեռ պաշտում եր յուր իդեալին, վորովհետեւ դա նրա միակ աստվածուհին եր։

Նա զավեց հեծկտանքները, սրբեց արցունքը, վատքի կանդնեց, դդակր վերցնելով։

— Պետք ե շնորհավորել սինյորա Ստեֆանիային, —ասաց —Բայց այժմ ուշ եռ...վաղը...Ներողություն, սինյոր, լուիզայի համար չելի լալիս... Հոգնած եմ... Գիտեք...դիտեք... Լուիզան զուր ե ամուսնու հետ դընում Պարիզ...Կավալլարոն դնում ե յուր ձայնն ավելի մշակելու... Լուիզան յուր ապագան կզոհի նրան... Բայց ի՞նձ ինչ... ի՞նձ ինչ...

Քանի մի բոպե նրան պաշարեց անձնասիրության և ամոթի զդացումը։ Նա շփոթվեց յուր թուլությունից, արտաստրից։ Շփոթվեց այնպես, վոր յերեսիս չեր ուղղում նայել։ Վերցրեց մի քանի անդունան ան-

նպատակ, յետ դրեց, գլխարկը ձեռքին սկսեց վնասուել նրան, ծիծաղեց, կեղծ, անբնական ծիծաղով։ Վերջանքում նանկեց յուր թանձր մալերը, կանգնեց սեղանի մուտ և կարմրած աչքերը հառեց լամպարի լույսին։ Զգիտեմ ինչու, միշտ նրա աչքերը ձգտում ելին դեպի լույս։ Նա միրում եր նայել արդակի շողերին, լամպարի լույսին, վառարանի կրակին... Յեկ այդ լինում եր մանավանդ այն միջոցներին, յերբ նրա մաքերը պղտորված ելին, նրա հոգին խոռվված եր...

Յես տանջվում ելի անդորրությունից, վորովհետեւ չգիտեյի ինչու՝ միսիթարել մարմնացած տանջանքը։

Լուությունը տեսեց յերկար։ Յես անցուղարձ ելի անում։ Նա շարունակ կանգնած եր։ Հանկարծ, շրթունքները կրծոտելով, գլխարկը մի ձեռքով խիեց մյուս ձեռի ափին, շուռ յեկալ և, առանց ինձ հրաժեշտ տալու, արագ քայլերով դուրս դնաց...

Մանդովինան մնաց սեղանիս վրա, կարծես, վշտացած, վոր դարձյալ իրան մոռացան... ԶԵ՞ վոր Լեռնը յեկել եր նրան տանելու, վոր վաղը նվազի շողենավի վրա...

Ինձ պաշարեց դղջման զդացումը։ Ինչու այդպիս շուռ և անդույշ հայտնեցի նրան լուրը։ Ով դիտե, շուռ վաղեց և ինչ կարող ե անել։ Յերկու անդամ բարձուր վերև և, դրսից լսելով նրա ձայնը, հանգստացած վերև, դրսից լսելով նրա ձայնը, հանգստացած վերև, յետ յեկա։ Սկսեցի ինձ միսիթարել այն մտքով, վոր կատարել եմ անկեղծ բարեկամի պարտք՝ բանալով Լեռնի աչքերը։ Մտածեցի նաև, վոր, եհ, ինչ ել լիւր և ամուսնութ տարեկան պատանի յե, հաղիվ թե վիշնի, տանություն պատանի յե, հաղիվ թե վիշնի, տանություն պատանի յերկար ապրի։ Լաց կլինի, լաց կմինի տը նրա սրտում յերկար ապրի։

Աւոնը՝ կհանդստանա... Մտածում եյի այսպես և, միւնույն ժամանակ, զգում, վոր սխալված եմ...

Առավատը զարթնեցի մի անսովոր ծանրություն սրախ վրա: Շտապով խմելով մի բաժակ թեյ, գնացի վերեւ: Լեռնը տանը չեր: Ալմաստն ասաց, թե գիշերը, անկողին պառկելուց առաջ, տվել ե իրան հիսուն ռուբլի և համբուրլել հետը, թե գրեթե ամբողջ գիշերը նստած ե յեղել գրասեղանի քով, դրել ե, ջընջել, պատուել: Առավոտը կրկին համբուրլել ե նրան հետ և դուրս գնացել, տանը թողնելով կիթառը, վոր ամեն որ հետը տանում եր:

— Նա տխո՞ւր եր, — հարցո՞ի յես:

— Վոչ տխուր, վոչ ուրախ. այնպես եր, ինչպես միշտ:

Կիթառը տանն ե, մանդոլինան, սենյակումս. ղարդ ե, վոր նա վոչ պանդոկ ե գնացել, վոչ շողենավ: Ո՞ւր կարող ե լինել: Յես փափագեցի տեսնել նրան անպատճառ, հենց նույն ժամին. յես սաստիկ անհանդիսա եյի: Դուրս յեկա, պտտեցի թատրոնների շուրջը, անցա յերկու անդամ Դերիբասյան փողոցը, ուր յերբեմն Լեռնը զբոսնում եր: Զկար: Որը կիրակի յեր. մտածեցի, գուցե հայոց յեկեղեցումն ե. կիրակի որերը յերբեմն գնում եր պատարագ լսելու: Այնտեղ չեր:

Ավելի քան յերկու ժամ թափառելուց հետո վերադարձա տուն մտածուր: Թվում եր ինձ, վոր մի բան եմ կորցնում, մի շատ թանկագին բան:

Դարրասի առջև հանդիպեցի Զառւշենկոյին: Նա Լեռնի սենյակից եր գալիս: Նա ել եր փնտում ընկե-

րոջը, չդիտեմ ինչվոր «կարեռ» գործի համար: Ծեղել եր պանդոկներում, «լիերսոն», շոգենավի վրա, հարցը եր իր նավատիներն այսոր նրան չեն տեսել:

Պատմեցի նրան պատահածը:

— Ո՛, ունայնություն, — վոչեց բանաստեղծն յուր սովորական վաղերությամբ. — յես միշտ ասել եմ, թե սերը դեպի կինը հոգու հիվանդություն ե: Լեռնը վաղուց և ինձ խոստովանել, թե սիրահարված ե այդ աղջկա վրա: Ո՞չ, ի՞նչքան եր խոսում նրա մասին, ի՞նչպես հառաջում... Պետք ե գտնել նրան, չենց իսկույն... նա տաքարյուն ե...

Խնդրեցի նրան մի քանի բոսկե սպասել ինձ գըրսում: Գնացի սինյորա Ստեֆանիայի մոտ: Անշուշտ Լեռնուն այսոր յեղել ե նրա մոտ. չե՞ վոր ուզում եր շնորհավորել նրան:

— Յերջանիկ տրամադրության մեջ դուռ Ստեֆանիային: Նա ուրախությունից յերդում եր ու պարունակած մոտ այն բոպեյին, յերբ մտա սեղանատուն: Նա ասաց, թե հրամիլիել ե մի քանի բարեկամներ ու ծանոթներ, թե պետք ե մի լավ զվարճանալ:

— Ա՛խ, սինյոր, այնքան ուրախ եմ, վոր ուզում եմ բոլորին դրկել ու համբուրել:

«Մի՛ գուցե ե ինձ», — ակամա մտածեցի յես, դրեւ յերկուուրով նայելով սյուների պես հաստ և ուժեղ կոնկրետին:

Լեռնի մասին ասաց, թե առավոտն յեղել ե յուր յոտ, չնորհավորել ե, ձեռքը համբուրել:

— Նա քաղաքավարի պատահի յի, իսկ և իսկ ար-

տիստ: Կարծես հայրը վարսավիլիր չի յեղել, այլ ջեն-
տլմէն: Բայց ծիծաղելի յեր, չեր համատում Լուլզայի
ամուսնությանը: Հեռադրները տվեցի, ինքը կարգաց,
մեկ ել չորհավորեց, բայց այնպես մտիկ արակ աչքե-
րիս խեթ-խեթ, ապշած, վոր, կարծես, նոր եր տես-
նում ինձ: Հետո առանց դես, առանց դեմ ասաց. «Սին-
յորա Ստեֆանիա, մորս սիրեցեք, նա խեղճ կնիկ ե»:
Առհասարակ շատ ոտարութի յեր...

Այսքանը բավական եր, վորպեսդի իմ մեջ ծառեր
վատ նախաղդացում: Դուրս դալով փողոց, Զառուշն-
կոյին հաղորդեցի իմ յերկուուղը: Նա առաջարկեց գնալ
քաղաքային թատրոնի կողմերը: Իցկոն այժմ պիտի այն-
տեղ լինի. նա կարող ե գտնել Լեռնին:

Իցկոյին հանդիսեցինք յուր հասակի մի հույնի
հետ սաստիկ վեճի բոնված: Հույնը կատաղել եր,
հայհոյում եր իցկոյին, անվանելով նրան «քոսոս
թհուդ», «սատկած առնետ» և այլն: Իսկ իցկոն միայն
կրկնում եր. «դու ինքդ, դու ինքդ»:

Զառուշնկոն սպառնալով հույնին դավագանով
ջախճախել նրա դլուխ, ստիպեց նրան լոել: Հայտնվեց,
վոր վեճը Լեռնի պատճառով եր: Հույնը Լեռնի մըր-
ցակիցն եր թատրոնի վերնահարեկում և շվացնում եր այն
յերգիչներին, վորոնց նա ծափահարում եր: Նա իցկոյի
մոտ Լեռնին հայհոյել եր. Իցկոն պաշտպանել եր բացա-
կա ընկերոջը և վեճի բոնվել:

Յերբ Զառուշնկոն պատմեց ինձանից լսածը, ից-
կոն, վերուվեր թռչկոտելով, գոչեց.

— Իհե՛, իհե՛, խեղճ Լեռն...

Նա ես զիտեր, վոր Լեռնը մեշտ յերազում եր

Լուլզայի մասին, և պատմեց մեղ մի քանի մանրա
մասներ: Իմիջի այլոց, ասաց, թե շատ տիսրելիս Լե-
վոնը զնում ել «Ալեքսանդրյան պառկ» կոչված զրո-
սավայրն ու այնտեղ ծովափի կողմում, մի հեռավոր
նստարանի վրա նստում, կիթառը ծնկների վրա դրած,
և մտիկ անում նախահանգստից դուրս յեկող չողենա-
վերին: Քանի՛ քանի անգամ իցկոն հանդիպել ե այդ
զրության մեջ, և նա ասել ե. «Իցկո՛, յերբ մտիկ եմ
անում մի հեռացող չողենավին, ինձ թվում ե, վոր յես
ել նրա վրա ուրիշների հետ զնում եմ հեռու, հեռու
յերկիրներ»...

— Գնա՛նք Ալեքսանդրյան պառկ, այնտեղ ե, յե-
րեփ, — առաջարկեցի յես:

Տասը լոպեյում հասանք զբոսավայրը, անցանք
այդ ընդարձակ այդին յերկայնությամբ ու լայնու-
թյամբ, նայեցինք բոլոր ծառուղիները. չկար ու չկար
լեռնը...

Ես վերադարձա տուն հոգնած և՝ Փիզիկապես, և՝
հոգեպես, թողնելով Զառուշնկոյին և իցկոյին վորոնել
իրանց կորած ընկերոջը...

Վաստ նախաղդացումս ինձ այնքան չարացրել եր,
վոր յես առանց վորեկ պատրիարկի հրաժարվեցի մաս-
նակցել սենյորա Ստեֆանիայի այդ որվա ուրախ խըն-
ճուքին: Ես պառկած եյի հագասով անկողնակալն
վրա և մտածում եյի Լեռնի և միմիայն Լեռնի մասին:
Վրա ախուր, հուսահասությամբ լի աչքերն եյի հե-
րա ախուր, հուսահասությամբ լի աչքերն եյի հե-

ըլ: Յերեակայում եյի նրան յուր թշվառ հոր դրության մեջ. հարբած, կեղտոտ, վեր ընկած թատրոնի դրութիւն առջև, անցորդների ժաղըին ու սրախոսություններին յենթարկված...

Նայում եյի նրա մանղոլինային, սիրտս մորմոքվում եր: Անշունչ դործիքը, կարծես, լեզու յեր ստացել, վողբում եր յուր տիրոջը: Յես վերցրի նրան սեղանիս վրայից, քաշ արի պատի մի անկյունում, վոր այլևս աչքիս չընկնի...

Մի քանի անգամ մատներս գիտան նրա լարերին, և նրանց թույլ հնչյունները հիշեցրին ինձ այն նշանագոր առավոտը, յերբ կեռն առաջին անդամ նվազեց «Մադրեդի շրջմոլիկը»: Թշվա՛ռ շրջմոլիկ, ո՞ւր ես դու այժմ...


Իսկ այնտեղ, հարեան սենյակում ուտում, խմում, գլարճանում եյին հրավիրվածները: Լսում եյի Ռախսայի ձայնն և սինյորա Ստեֆանիայի բարձրածայն ուրախ ծիծաղը, վոր առատ-առատ բղխում եր նրա լայն, առողջ կրծքից... Փոքր առ փոքր նյարդերս թմրեցին. յես նիրհեցի, վորովհետեւ դընթե ամբողջ գիշեր չեյի քնել... Կեսքուն և կիսարթուն ուրության մեջ լսեցի ինչ-կոր դզրդոց: Վեր թոա տեղիցս... դա կեռնի մանղոլինն եր, վոր ընկել եր պատից հատակի վոս: Նույն ըստեյին, յերբ գործիքը նորից քաշ եյի անում պատին, դրսից լսեցի անսովոր աղմուկ: Շատապեցի նախասենյակ և այնտեղ հանդիպեցի սինյորա Ստեֆանիային յուր հյուրերի հետ: Նրանց դեմքերն արտահայտում եյին զարմացում և յերկուով:

— Ի՞նչ է պատահել, ի՞նչ է պատահել, — հարցնում եյին միմյանց:

Մեր բնակարանի մուտքի առջև կանգնած եր այրի Ալմաստը և ձեռները տարածած դեպի ներքեւ, զոռում եր հրդեհում այրվողի պես: Յերկու վոստիկան և մեր գավթապահը բարձրացնում եյին սանղուղով... Լեզունին: Նրանց յետելից բարձրանում եյին Զառւշենկոն և իցկոն:

Նայելով լեռնի թրջված հագուստին, կապտած գեմքին, ամեն ինչ հասկացա... Մնացյալն յերկու խոսքով պատմեցին Զառւշենկոն և իցկոն:

Լեռնին հանել եյին ջրից նավաստիները «Խերսոն» շողենավի տակից, վոր յերկու շարաթից հետո պիտի տաներ նրան իտալիա...



ՀՀ Ազգային գրադարան



NL0356059

ԳԻՒԾ 45 Կ.
ԿԱԶՄ 20 Կ.

98237

ШИРВАНЗАДЕ
Արտիստ

Բնա. ՀՀ Հրազդան, Երևան, 1984